

Ն՝ Ն՝ ՆՈՒՆԱՆՆԻՍՅԱՆ

ԼՐԱՆԱՆՅԱՆ

Ի ԳՆԱԺԱՄԸ

ԵՎ

ԼՐԱՆԱՆԻ

ՆԱՅ

ՆԱՄԱՅՅՆԻ

ԳԻՐԳՈՐՈՇՈՒՄԸ




«ՆԱՅՆԱՅՆ»

✓ 378
Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ֆրեդ

**ԼԻՄԱՆԵՆՅԱՆ ՃԴՆԱԺԱՄԸ
ԵՎ ԼԻՄԱՆՆԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
(1975-1982 ԹԹ.)**

1099

«ԱՅՍՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982



Գրախոս՝ պատմական գիտությունների
քննիչաժու՝ Վ. ՀԱՄԱԶԱՍԳՅԱՆ

Հովհաննիսյան Ն. Հ.

Հ 854 Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ
համայնքի դիրքորոշումը, (1975—1982 թթ.),
Եր.: Հայաստան, 1982— էջ 80:

Գրքույկում լուսարանվում են Լիբանանյան կոնֆլիկտի պատճառները և բնույթը, բացահայտվում ԱՄՆ-ի և Խորալիի դերը կոնֆլիկտի առաջացման ու շարունակման գործում: Ցույց է տրվում հայ համայնքի դերը և եշանակութունը Լիբանանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում: Զդարի տեղ է հատկացված Լիբանանյան աշերի կողմից 1978 և 1979 թթ. հայ համայնքի վրա զինված հարձակման և Լիբանանահայություն ինքնապաշտպանական մարտերի նկարագրմանը: Ուսումնասիրությունը գրված է գլխավորապես Լիբանանյան ազդյութների և Հեղինակի՝ որպես դեպքերի ականատեսի, ապավորությունների հիման վրա:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար

0801000000
Հայաստանի
701 (01) 82

ԳՄԴ 66,2 (07)
32 Н

© «Հայաստան» հրատարակչություն, 1982

Լիրանանում 1975 թվականին սկսված և մինչև
օրս շարունակվող կոնֆլիկտը նրա նորագույն
պատմության թերևս ամենածանր ժամանակա-
շրջանն է: Այն իր վրա է բեռնել համաշխարհային
հասարակայնության ուշադրությունը և դարձել
միջազգային զանազան կազմակերպությունների,
կոնֆերանսների և հանդիպումների քննարկման
մշտական առարկա:

Լիրանանյան ճգնաժամը շժադեց պատահակա-
նորեն և, ավելին, ոչ հանկարծակի: Նա ունի իր
բազաբական և սոցիալ-տնտեսական դրդապատ-
ճանները և իր էությունը կազմում է մերձավոր-
արևելյան ճգնաժամի բաղկացուցիչ մասը:



Լիրանանն իր ներկա աշխարհագրական սահ-
մաններով բազաբական քարտեզի վրա հայտնվեց
1920-ի սեպտեմբերի 1-ին:

Հայտնի է, որ առաջին համաշխարհային պատե-
 րազմից և Օսմանյան կայսրության անկումից
 հետո նրա կազմի մեջ մտնող արաբական տերի-
 տորիաները բաժանվեցին Անգլիայի և Ֆրանսիայի
 միջև: 1920-ի ապրիլին Ազգերի Լիգայի Խորհրդի
 Սան Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսում
 Սիրիայի և Լիբանանի մանդատը տրվեց Ֆրանսիա-
 յին, իսկ Իրաքի և Պաղեստինի մանդատը՝ Անգլիա-
 յին: Մանդատային սիստեմը գաղութային տիրա-
 պետության մի նոր և սքողված ձև էր: «Երբ խո-
 սում են գաղութների մանդատներ բաժանելու
 մասին,— գրել է Վ. Ի. Լենինը,— մենք հիանալի
 գիտենք, որ դա մանդատների բաժանումն է
 հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկ-
 րազնդի բնակչության մի շնչին մասին հատկաց-
 վող իրավունքների բաժանումն է երկրազնդի
 բնակչության մեծամասնությանը շահագործելու
 համար»¹:

Սիրիայում և Լիբանանում ամբողջ իշխանությու-
 նը կենտրոնացվեց ֆրանսիական գլխավոր կոմի-
 սարի ձեռքում: Հենց նրա դեկրետով հռչակվեց
 «Մեծ Լիբանանի» ստեղծումը: Այն կազմավորվեց
 Լեռնալիբանանի, Բեյրութի, Տրիպոլիի, Սայդայի,
 Սուրի և Բեքաայի շրջանների միավորման հիման
 վրա²: Այդ պահից Լիբանանի ազգային-հայրենա-

¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Հ. 39, էջ 401:

² Լիբանանի տարածությունը կազմում է մոտ 10 հազ.
 քառ կմ, իսկ բնակչությունը՝ մոտ 3 մլն:

սիրական ուժերի գլխավոր խնդիրը դարձավ Ֆրանսիական մանդատի վերացումը և Լիբանանի քաղաքական անկախության նվաճումը, որը ձեռք բերվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: 1943-ի նոյեմբերին հռչակվեց Լիբանանի անկախությունը, որն ամրողչացավ 1946-ի դեկտեմբերի 31-ին, երբ Ֆրանսիական վերջին դիմվորը հեռացավ Լիբանանի տերիտորիայից²: Դա երկրի հայրենասիրական ուժերի խոշոր հաղթանակն էր: Անկախության նվաճումից հետո Լիբանանի զարգացումը շրջափոխվեց հարթ ու խաղաղ: Խշխանության գլուխ անցած բուրժուազիան և ֆեոդալ-կալվածատերերը շուտեփն երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական որևէ լուրջ խնդիր, ի վիճակի չեղան բավարարելու ժողովրդական ամենալայն զանգվածների օրինական պահանջները: Իսկ արտաքին հարաբերությունների բնագավառում Լիբանանի կառավարությունը վարում էր բացահայտ սլոբարնիստյան քաղաքականություն, առաջացնելով ինչպես երկրի ազգային-հայրենասիրական ուժերի, այնպես էլ հակաիմպերիալիստական դիրքերի վրա կանգնած արաբական մյուս պետությունների դժգոհությունը: Ուստի Լիբանանի 1946—1975 թթ. պատմության համար բնորոշ էին ներքաղաքական սուր պայքարը, սոցիալ-դասակարգային ցնցումները և քաղաքական ընդհանուր

² Այդ մասին մանրամասն տե՛ս, Ն. Է. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Երևան, 1967:

անկայուն վիճակը: Այդպիսի ժառանգությամբ,
լիբանանը 1975-ին կանգնեց քաղաքացիական
պատերազմի շեմին:



1975-ի ապրիլի 13-ին մի խումբ պաղեստինցիներ ավտոմեքենայով Բեյրութի արևմտյան հատվածից վերադառնում էին արևելյան հատվածում գտնվող իրենց Թել-Ջաաթար ճամբարը: Ճանապարհն անցնում էր Այն առ-Ռումաննա թաղամասով, որը բնակեցված է գլխավորապես քրիստոնյաներով և որտեղ տիրապետող դիրք ունի Հիզր ալ-Քաթաիր ալ-Լուբնանի՝ լիբանանյան փաղանգներ կուսակցությունը: Ավտոմեքենան Այն առ-Ռումաննայով անցնելու պահին փաղանգավորների զինված մարտիկները դավադրաբար կրակ են բացում նրա վրա, որի հետևանքով զոհվում են 27 անմեղ պաղեստինցիներ: Ապրիլի 13-ին տեղի ունեցած այդ միջադեպը ընդունված է համարել քաղաքացիական պատերազմի սկիզբը: Այդ օրվանից սկսվեցին ռազմական բախումները, որոնք տարածվեցին ամբողջ Բեյրութում ու նրա արվարձաններում, այնուհետև երկրի գրեթե բոլոր մասերում, հյուսիսում՝ Տրիպոլիի շրջանում, հարավում՝ Սայդայի շրջանում, արևելքում՝ Բեկասայի, մասնավորապես Ջահլեի շրջանում և այլ վայրերում: Այսպես բացվեց լիբանանի նորագույն պատմության ամենաողբերգական էջը:

Սակայն ապրիլյան դեպքերը լուկ առիթ էին: Կոնֆլիկտն ունի իր սոցիալ-քաղաքական պատճառները, որոնց բացահայտումը թույլ կտա ճիշտ հասկանալու նրա բնույթը և լուծման հեռանկարները:

Լիբանանյան ճղնաժամն ուղղակի արդյունք է դանազան ներքին և արտաքին գործոնների:

Առաջին, կանգ առնենք ներքին գործոնների կամ դրդապատճառների բացահայտման վրա: Երբ 1943-ի նոյեմբերին հռչակվեց Լիբանանի անկախությունը, նրա պետական կառուցվածքի հիմքում դրվեց կոնֆեսիոնալիզմի՝ կրոնա-դավանական սկզբունքը: Լիբանանի ամենաազդեցիկ քրիստոնյա համայնքի՝ մարոնիների⁴ ղեկավար Բիշարա ալ-Խուրին, որ դարձավ անկախ Լիբանանի առաջին պրեզիդենտը, և ամենաազդեցիկ մուսուլման-սուննի համայնքի ղեկավար Ռիադ Սուլհը, որն ստանձնեց պրեմիեր-մինիստրի պաշտոնը, կնքեցին այսպես կոչված «Ազգային պակտը»: Դա մի համաձայնագիր էր, որը սահմանում էր Լիբանանի պետական կառուցվածքի, ներքին և արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքները: Համաձայն «Ազգային պակտի», քրիստոնյաները չպետք է փնտրեն Ֆրանսիայի կամ արևմտյան որևէ

⁴ Մարոնիները քրիստոնեական առանձին ազանգ են և իրենց անունը ստացել են սուրբ Մարոնից: XVII դարասկզբից նրանք ճանաչում են Հռոմի պապին որպես իրենց հոգևոր պետ, սակայն ունեն նաև իրենց առանձին եկեղեցապետը՝ պատրիարքը:

այլ պետութեան հովանավորութիւնը, իսկ մուսուլմանները շպետք է փորձեն Լիբանանը որևէ ձևով միավորել Սիրիայի կամ մեկ այլ արաբական պետութեան հետ: «Աղգային պակտը» Լիբանանը համարելով արաբական երկիր, միաժամանակ ընդգծում էր նրա հատուկ «քրիստոնեական» բընույթը: Արտաքին քաղաքականութեան հարցում երկու համայնքների ղեկավարները համաձայնվեցին, որ Լիբանանը պետք է վարի դրական շեղոքութեան քաղաքականութիւն: Գալով պետական կառուցվածքին, ապա «Աղգային պակտը» սահմանեց, որ Լիբանանի հանրապետութեան վարչական կառուցվածքի հիմքում պետք է դրվի կրոնա-համայնքային սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի Լիբանանի պրեզիդենտ կարող է լինել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի, պրեմիեր-մինիստրը՝ մուսուլման-սուննի և պառլամենտի նախագահը մուսուլման-շիա համայնքի ներկայացուցիչը: Բացի այդ, սահմանվեց, որ երկրի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի, պետական անվտանգութեան ղեկավարի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոններ կարող են զբաղեցնել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի ներկայացուցիչները: Նման համամասնութիւնը պահպանվեց երկրի պետական, ռազմական, դատական և այլ մարմինների միջին և ստորին օղակների պաշտոնների բաշխման ժամանակ: Ի լրումն այս բոլորի, ընդունվեց մի կարևոր սկզբունք ևս՝ Լիբանանի պառլամեն-

տում մուսուլմանական յուրաքանչյուր 5 դեպու-
տատի դիմաց ընտրել 6 քրիստոնյա դեպուտատ,
որով մշտապես ապահովվում է քրիստոնյա դե-
պուտատների գերակշռությունը երկրի բարձրա-
դույն օրենսդիր մարմնում, իսկ քրիստոնյա դե-
պուտատների մեջ՝ մարոնիների գերակշռությու-
նը:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով կիրանա-
նում 1943-ին հաստատված կրոնա-համայնքային
համակարգի էությունը, որը գործում է մինչև օրս:
Վերը շարադրվածից դժվար չէ տեսնել, որ
քրիստոնյա-մարոնի համայնքի՝ վերնախավին հա-
շտակեց տիրապետող դիրքեր գրավել պետության
մեջ: Այլ կթե նկատի ունենանք, որ կիրանանում
կառավարման պրեզիդենտական ձև է հաստատ-
ված, և պրեզիդենտը օժտված է շափազանց լայն
լիազորություններով, ապա միանգամայն ճիշտ
կլիներ տեսլ, որ կիրանանում անկախության նվա-
ճումից հետո հաստատվեց քրիստոնյա-մարոնի
համայնքի վերնախավի յուրատեսակ դիկտատու-
րա: Գրա հետևանքով փաստորեն երկրի կառա-
վարման բնագավառում և հասարակական-քա-
ղաքական հարաբերությունների ոլորտում ստորա-
դաս վիճակում են գտնվում ոչ միայն մուսուլմա-
նական համայնքները, այլև մյուս քրիստոնյա
համայնքները, ինչպես ուղղափառ, կաթոլիկ, բո-
րոբական և հայ իսկ մուսուլմանական համայնք-
ների մեջ ավելի նախապատվելի դիրքեր ունի
սունի համայնքը, մինչդեռ մյուսները, հատկա-

պես շիա համայնքը, որն այսօր իր թվաքանակով ամենամեծն է ոչ միայն մուսուլմանական, այլև լիբանանյան բոլոր համայնքների շարքում, առավել շրջանցվածն է համարվում: Այս հանգամանքը դարձավ լարվածության առաջացման լրացուցիչ աղբյուր:

Եթե կրոնա-համայնքային սիստեմի հաստատումը անկախության նվաճման պահին և առաջին տարիներին կարելի է դիտել ինչ-որ շահով կոմպրոմիսային քայլ, ապա հետագա տարիներին այն արդեն հնացել էր, իրեն սպառել և ոչ մի կերպ չէր կարող ծառայել լիբանանի ազգային շահերին: Այդ համակարգն ի սկզբանե իր մեջ պարունակում էր ապագա կոնֆլիկտների և դժգոհությունների սաղմեր, հանդիսանում լիբանանի պետականության թուլության գլխավոր պատճառներից մեկը, սնում անշատվողականության ոգի և նպաստում համայնքների առանձնանալուն և իրենք իրենց մեջ պարփակվելու տենդենցներին: Նա փաստորեն խոչընդոտում էր քաղաքացիության սկզբունքի արմատավորմանն ու ամրապլնդմանը և համայնքներից վեր կանգնած լիբանանյան հասարակության կազմավորմանը: Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման շահերն ուղղակի հակասության մեջ էին գտնվում գոյություն ունեցող այդ համակարգի հետ: Այդ հողի վրա երկրում կուտակվել էր խիստ դժգոհություն, որը համակել էր մնացած համայնքների ոչ միայն շարքային անդամներին, այլև

առևտրա-Ֆինանսական, արդյունաբերական բուր-
ժուադիայի և կալվածատերերի շրջանների ներկա-
յացուցիչներին: Նրանք պահանջում էին արմա-
տական փոփոխություններ մտցնել կիրանանի պե-
տական և սոցիալ-քաղաքական կառուցվածքում:
Խոսելով փոփոխությունների կամ ռեֆորմների
մասին, անհրաժեշտ է նշել, որ ոչ մի համայնք,
ոչ մի կուսակցություն կամ քաղաքական այլ ուժ
երբեք խնդիր չի դրել կիրանանում սոցիալիստա-
կան կամ նույնիսկ հեղափոխական-դեմոկրատա-
կան ռեժիմ հաստատել: Խոսքը զնացել և զնում է
իրենց դարն ապրած ֆեոդալական-կլանային,
կրոնա-համայնքային սիստեմի վերացման, կի-
րանանում աշխարհիկ պետության սկզբունքների
հաստատման և բուրժուական-դեմոկրատական
պառլամենտարիզմի սկզբունքների հետևողական
կիրառման մասին: Դրա հետ անմիջականորեն
աղերսվում է պետության կառավարման հարցում
քրիստոնյա-մարոնի վերնախավի մոնոպոլիայի
վերացման խնդիրը: Այս պահանջները, որ լիտ-
վին համապատասխանում են կիրանանի համընդ-
հանուր շահերին, հստակ կերպարանք ստաշան
60-ական թվականներին և մեծ հետևողականու-
թյամբ առաջադրվեցին 70-ական թվականների
սկզբներին:

Սակայն քրիստոնյա-մարոնի վերնախավը լսել
անդամ չէր ուզում երկրի պետական և սոցիալ-
քաղաքական կառուցվածքում որևէ փոփոխություն
մտցնելու մասին: Նա ամեն կերպ ձգտում էր պահ-

պանել գոյութուն ունեցող համակարգը, որի շըրջանակներում ինքնաբերաբար կապահովվեր նրա տիրապետող, մենաշնորհային դիրքերը Լիբանանում: Դրանով իսկ քրիստոնյա-մարտնի համայնքի վերնախավը իրեն հակադրեց Լիբանանի մնացած բոլոր, թե՛ մուսուլմանական և թե՛ քրիստոնյա համայնքներին: Եվ դա դարձավ Լիբանանյան կոնֆլիկտի ծագման գլխավոր պատճառներից մեկը:

Երկրորդ, նշված ժամանակաշրջանում, հատկապես 60-ական թվականների կեսերին և 70-ական թվականների սկզբներին, խիստ սրվեցին սոցիալ-դասակարգային կոնֆլիկտները Լիբանանում: Երկրի կառավարող վերնախավի համար փաստորեն բացվեց մի նոր ճակատ: Այդ ընթացքում շարունակվում էր խորանալ Լիբանանյան հասարակութային սոցիալական բեկոացման պրոցեսը, որը մեծապես խթանեց Լիբանանի աշխատավորութային պայքարը հանուն իրենց տնտեսական վիճակի բարելավման, քաղաքական իրավունքների ընդլայնման և դեմոկրատիայի սկզբունքների հետևողական կիրառման: Կարելի է համարձակորեն պնդել, որ դեռ երբեք Լիբանանի աշխատավորների պայքարը չէր հասել այնպիսի կազմակերպվածութային և քաղաքական բարձր գիտակցութային, ինչպես կոնֆլիկտին նախորդած տարիներին: Դրա վառ դրսևորումներն էին բազմաթիվ գործադուլները և ցույցերը, որ մեկը մյուսի ետևից տեղի էին ունենում Բեյրութում, Սայդայում, Նաբաթիայում,

Տրիպուլիում և երկրի այլ վայրերում: Դրան զուգահեռ ամրապնդվում ու նոր ծավալ էր ստանում արհմիութենական շարժումը: Նշված ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը կիրանանի ձախուժերի, նրանց քաղաքական կազմակերպութունների դիրքերի ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքում նրանց դերի ու կշռի բարձրացումն էր: Այստեղ հատկապես պետք է նշել կիրանանի Կոմունիստական կուսակցութունը, որը, 1970-ին նվաճելով լեզալ գործունեության իրավունք, ակտիվորեն մտավ պայքարի մեջ, դեկավարելով մասսաների շարժումը կիրանանի տընտեսական առաջադիմության, մայրիների երկրում անհրաժեշտ սոցիալ-քաղաքական վերափոխումների կիրառելու համար: Զգալիորեն աճեցին նաև կիրանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցության, ինչպես նաև այլ ձախ կազմակերպությունների գիրքերը:

Այս բոլորը չէր կարող վրիպել մարոնիների վերնախավի ուշադրությունից: Նա լավ էր հասկանում, թե իր համար ինչպիսի վտանգներով է հղի այդ պրոցեսի հետագա զարգացումը: Բայց նա միաժամանակ ըմբռնում էր, որ արդեն սովորական միջոցներով հնարավոր չէ կանխել աշխատավորների բազում ելույթները և դեմոկրատական ուժերի դիրքերի ամրապնդման հետագա ընթացքը: Ուստի նա տենդորեն ուղիներ է որոնում «լուծելու» սոցիալական կոնֆլիկտը, ավելի ու ավելի հակվելով այն մտքին, որ դա հնարավոր է

անել միայն ուժի միջոցով, միաժամանակ նպատակ ունենալով ջախջախիչ հարված հասցնել երկրի դեմոկրատական, ազգային հայրենասիրական ուժերին: Այս վերջիններս, իհարկե, քաշատեղյակ էին կառավարող վերնախավի այդ մտադրություններին և իրենք իրենց հերթին կիրառում էին անհրաժեշտ միջոցառումներ, մի կողմից լիբանանյան հետադիմության ծրագրերին դիմադրավելու, իսկ մյուս կողմից՝ ժողովրդական զանգվածների պայքարին ավելի կազմակերպված ու նպատակամղված բնույթ տալու համար:

Ահա այսպես, սոցիալական կոնֆլիկտի սրման հիման վրա, ի հայտ եկավ լիբանանյան ճգնաժամի մյուս պատճառը:

Երրորդ, լիբանանի ներքաշաքական լարվածությունն ավելի շիկացավ այն բանից հետո, երբ այնտեղ հաստատվեցին Պաղեստինի դիմադրության շարժման շոկատները, որին դեմ էին աչ էքստրեմիստական տարրերը: Լիբանանում են գտնվում մոտ 400 հազար պաղեստինցի գաղթականներ: Դեռևս 1969-ի նոյեմբերի 3-ին Կահիրեում ստորագրված համաձայնագրով սահմանվեցին պաղեստինցիների իրավունքները և գործողությունների բնույթը լիբանանի տերիտորիայում, որի հիմնական իմաստն այն էր, որ լիբանանում հաստատված պաղեստինցիներն իրավունք ունեին մասնակցելու պաղեստինյան դիմադրության շարժմանը, բայց և պարտավոր էին հարգել լիբանանի սուվերենությունը և անվտանգությունը: 1970-ի

աշնանը, Հորդանանում կառավարական զորքերի
և պաղեստինցիների միջև տեղի ունեցած արյունա-
լի բախումներից հետո, վերջիններիս գլխավոր
ուսումական ուժերը և ղեկավար մարմինները տե-
ղափոխվեցին և հաստատվեցին Լիբանանում: Շու-
տով նրանց և Լիբանանի դեմոկրատական և ազ-
դային-հայրենասիրական ուժերի միջև հաստատ-
վեցին բարեկամական հարաբերություններ, որոնք
այնուհետև վերածվեցին սերտ համագործակցու-
թյան և փոխադարձ աջակցության: Կասկածից վեր-
է, որ այդ հանդամանքը նպաստեց Լիբանանի
հայրենասիրական ուժերի դիրքերի ամրապնդա-
նը: Վերջիններս էլ իրենց հերթին ամենալայն բա-
րոյարարական աջակցություն են ցույց տալիս
պաղեստինյան դիմադրության շարժմանը:

Բուլոնումիս այլ դիրք գրավեցին մարոնի վերնա-
խավը և լիբանանյան բուլոն երանդի աշերը: Առ-
երես ընդունելով Կահիրեի 1969-ի նոյեմբերի 3-ի
համաձայնագիրը, իրականում նրանք ամեն ինչ
անում էին այն ձախողելու համար: Մարոնի վեր-
նախավը և լիբանանյան աշերը ոչ միայն դեմ են
պաղեստինցիների հետ համագործակցելուն և լի-
բանանյան տերիտորիան նրանց կողմից ընդդեմ
Խորաշիլի օգտագործելուն, այլև պահանջում են,
որ նրանք հեռանան Լիբանանի տերիտորիայից:
Դա, ըստ էության, համապատասխանում է նաև
Խորաշիլի շահերին: Պաղեստինյան դիմադրության
շարժման շոկատների առկայությունը Լիբանանում
ուղղակի խուճապ էր առաջացրել աշերի մոտ:

վերաբերմունքը պաղեստինցիների և նրանց իրավունքի հանդեպ շրթաժան գիծ դարձավ Լիբանանի քաղաքական ուժերի միջև և հանդիսացավ ներքաղաքական դրուժյան հետագա սրման և լիբանանյան կոնֆլիկտի առաջացման դրդապատճառներից մեկը:

Եվ, վերջապես, շորրորդ, երկրում խիստ զրժգոհություն էր կուտակվել Լիբանանի արտաքին քաղաքական կուրսի կապակցությամբ: Թեև «Ազգային պակտը», ինչպես նշվեց վերևում, սահմամանել էր, որ Լիբանանի արտաքին քաղաքականությունը պետք է խարսխվի դրական շեղոթության սկզբունքների վրա, և Լիբանանը շպետք է փնտրի արևմտյան տերությունների հովանավորությունը, իրականում այդ սկզբունքները մոռացության էին մատնվել: Լիբանանը վարում էր ընդգծված պրո-արևմտյան քաղաքականություն, կոնֆլիկտին նախորդող տարիներին հատկապես սերտացնելով իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Նա հեռու էր կանգնած արաբական աշխարհին հուզող հարցերի լուծմանը մասնակցելուց: Այս բանի հետ շէին կարողանում հաշտվել երկրի ազգային-հայրենասիրական ուժերը, որոնք առաջադրեցին Լիբանանի արտաքին քաղաքականությունը վերափոխելու պահանջները: Նրանք, մասնավորապես, պահանջում են հրաժարվել միակողմանիորեն արևմտյան պետությունների հանդեպ ունեցած կողմնորոշումից, ավելի ակտիվորեն մասնակցել արաբական աշխարհին հուզող հարցերի լուծմանը՝ ելնելով


արարների կենսական շահերից, և համադործակցել արարական այն երկրների հետ, որոնք ընթանում են հակաիմպերիալիստական պայքարի ավանգարդում:

Ասկայն արտաքին քաղաքականության նմանօրինակ վերակողմնորոշումը բնավ չի մտնում մարտնի վերնախավի և ընդհանրապես լիբանանի կառավարող վերնախավի ժրագրերի մեջ: Այստեղից էլ լիբանանյան հասարակության հետագա երկվեզկումը և լիբանանյան ճգնաժամի մյուս պատճառը:

Ահա այսպիսի տարրերից միահյուսվեց լիբանանյան կոնֆլիկտը ծնած ներքին հակասությունների բարդ հանգույցը:

Ասկայն այս հակասությունները բավարար չէին լիբանանյան կոնֆլիկտին զինված պայքարի բնույթ տալու համար: Քաղաքական պայքարը քաղաքացիական պատերազմի վերածվելու համար մեր կարծիքով, անհրաժեշտ էր արտաքին ազդակների ներգործությունը:

Արտաքին գործոնների ներազդելը կապված է Մերձավոր արևելքում ԱՄՆ-ի ստրատեգիական գծի և Խորայելի էքսպանսիոնիստական քաղաքականության հետ: ԱՄՆ-ը ձգտում է իր բացարձակ տիրապետությունը հաստատել Մերձավոր արևելքում, ճնշել արաբական հակաիմպերիալիստական և ղեմակրատական շարժումները, ամրապլնդել արաբական հետադիմության դիրքերը և թույլ չտալ բարեկամական հարաբերություննե-



րի հաստատում ՄՍՀՄ-ի և արարական երկր-
 ների միջև Ինչպես նշել է Լ. Ի. Քրեժներ, «ԵՅԵՆ»
 նայինք իրադարձությունների արմատին, ապա
 այստեղ մենք գործ ունենք համաշխարհային իմ-
 պերիալիզմի, այսինքն՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մյուս
 տերությունների մի նոր փորձի հետ, որի նպա-
 տակն է հարված հասցնել Մերձավոր արևելքում
 հակաիմպերիալիստական հեղափոխության ուժե-
 րին, այստեղ պահպանել և ամրապնդել իր դիր-
 քերը⁵։ Իր այս քաղաքականության իրականաց-
 ման գործում ամերիկյան իմպերիալիզմը որպես
 հարվածային ուժ օգտագործում է Իսրայելին,
 Հարցն այն է, որ դեմոկրատական ուժերի դիրքերի
 ամրապնդումը լիբանանում և լիբանանի ձախաց-
 ման հեռանկարները անհանդստացնում էին ոչ
 միայն մարտնի վերնախավին, այլև հավասարա-
 պես ԱՄՆ-ին և Իսրայելին։ Այդ հանգամանքը
 դարձավ լիբանանյան աշերի և ԱՄՆ-ի ու Իսրա-
 յելի միջև կայուն համադորձակցություն հաստա-
 տելու առաջին շարժառիթը։

Մյուս կողմից, ինչպես լիբանանյան աշերը,
 այնպես էլ ԱՄՆ-ը և Իսրայելը հենց սկզբից գրա-
 վեցին բացահայտ թշնամական դիրք Պաղեստինի
 դիմադրության շարժման նկատմամբ, որը հան-
 դիսանում է համաարարական ազգային-ազա-
 տագրական շարժման բաղկացուցիչ մասը։ Լիբա-
 նանյան հետադիմության ձգտումը՝ լիկվիդացնել

⁵ Լ. Ի. Քրեժնե, Լեհիյան կուրսով, Կ. Տ, Երևան, 1979,
 էջ 207։

Պաղեստինի դիմադրությունից շարժման հենակետերը և դուրս վճռելի պաղեստինցիներին լիբանանից լքելի կերպով համապատասխանում է ԱՄՆ-ի և Իսրայելի շահերին: Քշնամական վերաբերմունքը պաղեստինցիների հանդեպ դարձավ լիբանանյան աշերի և ամերիկյան իմպերիալիզմի և իսրայելական ազդեցության միջև ամենատեսակ համագործակցություն հաստատելու գլխավոր դորժոններից մեկը:

Մի կարևոր հանգամանք ևս: Դա մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման խնդրում ԱՄՆ-ի նոր քաղաքական կուրսի որդեգրումն էր: Խախտելով ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված և ՍՍՀՄ-ի հետ ձեռք բերված համաձայնությունները մերձավորարևելյան կոնֆլիկտի համընդհանուր կարգավորման մասին, ԱՄՆ-ը հատկապես 1974—1975 թթ. սկսած, կանգնեց այդ կոնֆլիկտի մասնակի կարգավորման դիրքերում: Դա մի փորձ էր արարական ժողովուրդների վզին փաթաթել, ներսանց պարտադրել մերձավորարևելյան ճգնաժամի «լուծման» ամերիկյան տարրերակը, որն առաջին հերթին համապատասխանում է ամերիկյան իմպերիալիզմի և իսրայելական ազդեցության շահերին: Այդ քաղաքականության դրսևորումները ԱՄՆ-ի օկուպացիայի քարտուղար Լ. Քիսինջերի կողմից 1974—1976 թթ. ընթացքում կենսագործված այսպես կոչված «քալլ առ քալլ» կամ մասնակի զիջումների դիվանագիտությունն է, Եզիպատոսի պրեզիդենտ Անվար Սադատի այցելությունը 1977 թվականին Նրուսադիմ, որի պատճառով նա ստացավ

արաքների դավաճան մականունը և նրա անունը պատվեց հավիտենական խայտառակությամբ, 1978-ին Քեմպ Դեվիդում ԱՄՆ-ի, Իսրայելի և Եգիպտոսի միջև կնքված համաձայնագրերը Մերձավոր արևելքի ճգնաժամը «կարգավորելու» մասին և վերջապես, 1979-ին Իսրայելի և Եգիպտոսի միջև կնքված սեպարատիստական գործարքը, որի հետևանքով Եգիպտոսը դուրս եկավ Իսրայելին դիմակայող արաբական ճակատից, լքեց արաբական արդար գործը, մեկուսացավ արաբական աշխարհից և օբյեկտիվորեն ամրապնդեց ԱՄՆ-ի և Իսրայելի դիրքերը Մերձավոր արևելքում: Սակայն այս բարդ, բազմաբայլ ծրագիրն իրականացնելու համար ԱՄՆ-ը և Իսրայելը զբաղվում էին, որ անհրաժեշտ է շեղել արաքների ուշադրությունը դրանից, պառակտում մտցնել նրանց շարքերում և արաքներին ներգրավել եզրայրասպան պատերազմի մեջ: Նրանք հույս ունեին դրանով արաքների ուշադրությունը շեղել նաև 1967-ի հունիսյան ազրեսիայի հետևանքների վերացման համար ամերիկյան իմպերիալիզմի և իսրայելական ազրեսորի դեմ մղվող պայքարից:

Մի շարք հանգամանքների բերումով արաբական երկրների շղթայի թույլ օղակը դարձավ Լիբանանը, որտեղ 1975-ին պայթած կոնֆլիկտին վիճակված էր կատարելու արաբական երկրներին պառակտելու, նրանց ջանքերը ջլատելու, և ավելի կարևոր ու կենսական հարցից՝ իմպերիալիզմի և սիոնիզմի դեմ ուղղված պայքարից նրան ուշա-

դրութիւնը շեղելու գերը: Ահա այս նկատառումներն էին ընկած ԱՄՆ-ի և Իսրայելի քաղաքականութեան հիմքում՝ լիբանանեան կոնֆլիկտի վերաբերյալ: Եւ այդ նկատառումներից ելնելով է, որ ԱՄՆ-ը և Իսրայելը մշտապես շանուս են հրահրել և խորացնել լիբանանեան կոնֆլիկտը, ցույց տալով ամենալայն բարոյաքաղաքական աշակցութիւն և ակադեմիան և ֆինանսական օղնութիւն լիբանանեան աշերին:

Մյուս կողմից, վերը շարադրվածից դժվար չէ նկատել ուղղակի կապ մերձավորարևելյան ճգնաժամի և լիբանանեան կոնֆլիկտի միջև «Մենք պարզ տեսնում ենք, — նշել է ՍՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, — որ Լիբանանի իրադարձութիւնների իսկական հիմքը ընդհանուր առմամբ Մերձավոր արևելքի դրութեան կարգավորված լինելն է»⁶:

Ահա այսպես ներքին հակասութիւնները և արտաքին դրդապատճառները առաջացրին լիբանանեան կոնֆլիկտը, Մերձավոր արևելքում լարվածութեան պահպանման վտանգավոր աղբյուրներից մեկը:



Լիբանանեան ճգնաժամի էութիւնը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է լուսաբանել մի հարց ևս: Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի առաջին օրվանից Արևմուտքում, մաս-

⁶ Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 208:

նազորապետ ԱՄՆ-ում, ինչպես նաև Իսրայելում փորձեր են արվում լիբանանյան կոնֆլիկտը ներկայացնել որպես քրիստոնյաների և մուսուլմանների միջև ծավալված կրոնական պատերազմ: Եվ շատ հաճախ ԱՄՆ-ը ու Իսրայելը փորձում են լիբանանյան կոնֆլիկտին իրենց միջամտությունը բացատրել քրիստոնյաներին մուսուլմանական շարժից փրկելու մտահոգությամբ: Ուրվագծելով նման սխեմա, արևմտյան երկրներում ձախ, ազգային-հայրենասիրական ուժերը ներկայացվում են որպես մուսուլմանական, իսկ աջ ուժերը՝ քրիստոնեական:

Սա մի մտացածին տեսակետ է, որը հիմքից զուրկ լինելով հանդերձ, հղի է մեծ վտանգներով և նպատակ ունի սքողել կոնֆլիկտի իսկական պատճառները և ծուռ հայելու մեջ ներկայացնել ճշնաժամի իրական պատկերը:

Վերևում մենք արդեն նշեցինք, որ լիբանանյան ճգնաժամը քաղաքական բնույթ է կրում և ցույց տվեցինք այն ներքին և արտաքին պատճառները, որոնք հանգեցրին կոնֆլիկտի ծագմանը: Կրոնական գործոնը այստեղ որևէ դեր չի խաղում: Այս հարցում որոշակի հստակություն կարող է մտցրնել, եթե կոնֆլիկտին մասնակից կողմերի կազմը քննարկենք կրոնական պատկանելիության և երկրի ներսում ու արտաքական աշխարհում նրանց ունեցած հասարակական-քաղաքական կապերի տեսանկյունից:

Քննարկենք նախ և առաջ ձախ, ազգային-հայ-

րենասիրական ուժերի կազմը, որը ներկայացվում է որպես մուսուլմանական ուժերի համախմբում: Զախերը միավորվել և կազմում են Ազգային շարժումը՝ Հարաքաթ ալ-Վաթանի: Ազգային շարժումն ունի իր Կենտրոնական քաղաքական խորհուրդը, որը ղեկավարում էր Լիրանանի ականավոր քաղաքական ու պետական գործիչ Փամալ Ջումրլաթը: 1977-ի մարտին, նրա դավադրաբար սպանվելուց հետո, այդ պաշտոնը ստանձնեց նրա որդին՝ Վալիդ Ջումրլաթը: Կենտրոնական քաղաքական խորհուրդը կոորդինացնող մի մարմին է, որը միավորում է Ազգային շարժման մեջ մտնող առաջադիմական ուժերի գործողությունները:

Ազգային շարժման մեջ մտնում է Լիրանանի կոմունիստական կուսակցությունը, որն իր շարքերում միավորում է թե՛ քրիստոնյաներին, և թե՛ մուսուլմաններին: Կրոնական առումով նման կազմունի Ազգային շարժման մեկ այլ անդամ՝ Կոմունիստական գործողության կազմակերպությունը: Համանման սկզբունքով են կառուցված նաև նրանց մարտական շրկատները, որտեղ մուսուլմանները և քրիստոնյաները ուս-ուսի տված պայքարում են հանուն Լիրանանի առաջադիմության: Ազգային շարժման մյուս ազդեցիկ անդամը Լիրանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունն է, որը հիմնել է Փամալ Ջումրլաթը: Այս կուսակցության անդամների ճնշող մեծամասնությունը դրուզներ են, որոնք հանդիսանում են մուսուլմանական աղանդներից մեկը: Սակայն նրա

շարքերում, այդ թվում բարձրագույն ղեկավարութ-
յան մեջ կան նաև քրիստոնյաներ: Ազգային
շարժման մյուս ազդեցիկ անդամը Սիրիական
ազգային-սոցիալական կուսակցությունն է: Այն
թեև կոչվում է Սիրիական, սակայն լիբանանյան
ազգային կուսակցություններից մեկն է և իր շար-
քերում համախմբում է գլխավորապես ուղղափառ
քրիստոնյաներին: Ազգային շարժման մեջ են միա-
վորվել նաև լիբանանյան նասերականները (մու-
րաբիթունները), որոնք մուսուլմաններ են, Արա-
բական սոցիալիստական վերածնության՝ Բասս
կուսակցության լիբանանյան մասնաճյուղը, որը
կազմված է մուսուլմաններից և քրիստոնյաներից
և այլն:

Այսպիսով, վստահաբար կարելի է ասել, որ
ձախ, ազգային-հայրենասիրական ուժերի կամ
Ազգային շարժման մեջ համախմբվել են թե՛ մու-
սուլմանները և թե՛ քրիստոնյաները: Այդ միավոր-
ումը տեղի է ունեցել ոչ թե ինչ-որ կրոնական,
այլ որոշակի սոցիալ-քաղաքական սկզբունքների
հիմքի վրա: Ուստի պետք է կեղծիք համարել ձախ
ուժերին որպես մուսուլմանների բլսկ ներկայաց-
նելու բոլոր տեսակի փորձերը:

Իսկ աչքերը միավորվեցին այսպես կոչված «լի-
բանանյան ճակատում»: Նրա գլխավոր հարվածա-
յին ուժը Հիզր ալ-Քաթաիբ ալ-Լուբնանի՝ Լիբա-
նանյան փաղանգներ կուսակցությունը և նրա
ազգային զորամիավորումներն են: Այս կուսակ-
ցությունը հիմնվել է 1936-ին շեյխ Պյեր Ժամալիի

կազմից: Քեւե նրա շարքերում միավորվել են գըլ-
խաղորատու մարտնի համայնքի մանրրուքժուական
ւարրերը, սակայն նա արտահայտում է նաև այդ
համայնքի առևտրաֆինանսական, արդյունարե-
րական և ֆեոդալական վերնախավի շահերը: Կու-
սակցութիւնը կազմակերպչական առումով խա-
րրսխոված է ղինվորական սկզբունքի վրա: Նրա
անդամները, որոնք նույնիսկ խաղաղ տարիներին
ցույցերի և հանդեսների ժամանակ կրում են ղին-
վորական համազդեստ, բաժանվում են էսկադրա-
ների՝ 25-ական մարդ, սեկցիաների՝ 125-ական
մարդ, կորպուսների՝ 250-ական մարդ և փաղանգ-
ների՝ 500-ական մարդ: Այստեղից էլ կուսակցու-
թյան անվանումը⁷: Կուսակցութիւնն իր շարքե-
րում հիմնականում համախմբում է քրիստոն-
յա-մարտնիներին, որոնք կազմում են 83 %-ը,
13 %⁸-ը՝ քրիստոնյա մյուս համայնքների ներկա-
յացուցիչներն են, իսկ մնացած «4 տոկոսը նույն-
իսկ (համենայն դեպս այդ մասին ասվել է պաշ-
տոնապես) մուսուլմանական (շիա) համայնքի
ներկայացուցիչները»⁹:

«Լիբանանյան ճակատի» մյուս անդամը Հիզբ
ալ-կաումի ալ-ահրար՝ Ազգային լիբերալ կուսակ-
ցութիւնն է, որ հիմնվել է 1958-ին Լիբանանի
նախկին պրեզիդենտ Քամիլ Շամունը: Նրա անու-
նով այդ կուսակցության կողմնակիցները շատ

⁷ Տե՛ս, Ն. Հ. Հավնանիսյան, Ազգային-ազատագրական
պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), էջ 87:

⁸ Ս. Ս. Вольнов, Ливанский дневник, М., 1980, с. 13.

հաճախ կոչվում են շամունականներու կուսակցությունն արտահայտում է մարտնի համայնքի խոշոր առևտրական և ֆինանսական բուրժուազիայի և ֆեոդալական շրջանների շահերը: Այս կուսակցությունը ևս հիմնականում կազմված է քրիստոնյա-մարոնիներից: Սակայն նրա շարքերում, ճիշտ է, ոչ մեծ քանակությամբ, կան նաև մուսուլմաններու «լիբանանյան ճակատի» մեջ մտնում է նաև «լիբանանյան մայրիի պաշտպանության» ոչ մեծ, բայց ծայրահեղ էքստրեմիստական կազմակերպությունը:

«լիբանանյան ճակատի» նախագահը Քամիլ Շամունն է, իսկ ազգական ուժերի հրամանատարը Պյեր Ժմայելի որդի Բեշիր Ժմայելը, որն այժմ լիբանանյան աշերի ամենազորեղ դեմքն է:

Սակայն լիբանանյան աշերի մասին խոսելիս սխալ կլինե՞ր ամեն ինչ հանգեցնել նրա անգամների կրոնական պատկանելիությանը: Շատ կարելի է հաշվի առնել հարաբերությունների այն ամբողջ համակարգը, որ ստեղծվեց այդ շրջանում ինչպես բուն «լիբանանյան ճակատի ներսում», այնպես էլ նրանից դուրս: Նախ, «լիբանանյան ճակատին» շահողակեց միավորել ոչ միայն բոլոր քրիստոնյաներին՝ ուղղափառներին, կաթոլիկներին, բողոքականներին, հայերին և այլն, այլև ամբողջ քրիստոնյա-մարոնի համայնքը: Նրան շմիացավ մի այնպիսի ազդեցիկ մարոնի կազմակերպություն, ինչպես Ազգային բլոկ կուսակցությունը, որի ղեկավարն է Ռայմոն էդդեն: Դեռ ավել-

լին, նա հանդես եկավ և շարունակում է հանդես գալ փաղանգավորների քաղաքական դժի դեմ, դատապարտելով աշերի վարքագիծը, մանավանդ նրանց կապերը Խորայելի հետ: Ազգային բլոկը սկզբից եկթ դեմ էր քաղաքացիական պատերազմ սանձազերծելու լիբանանյան աշերի ու իմպերիալիստների ծրագրերին:

Լիբանանյան ճգնաժամի երկրորդ փուլում, 1977—1978 թթ., «Լիբանանյան ճակատից» անշատվեց ու նրա կազմից դուրս եկավ Լիբանանի հյուսիսի, Զղորթայի շրջանի մարտնիների խմբավորումը Լիբանանի նախկին պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեի գլխավարությամբ, որի պրեզիդենտության շրջանում սկսվեց քաղաքացիական պատերազմը: Խզվելով «Լիբանանյան ճակատի» հետ, Սուլեյման Ֆրանժիեի քրիստոնյա-մարտնիների խմբավորումը գնաց մուսուլման-սուննի համայնքի հետ հաշտեցման և համագործակցության հաստատելու ուղիով⁹: Դեռ ավելին, երեկվա դաշնակիցները վերածվեցին հակառակորդների: Սուլեյման Ֆրանժիեի և փաղանգավորների միջև 1978—1982 թթ. ընթացքում բազմիցս եղել են զինված բախումներ, որոնցից մեկի զոհը 1978-ին դարձավ նրա որդին, Լիբանանի պառլամենտի անդամ Տոնի Ֆրանժիեն: Զինված բախումներ տեղի ունեցան նաև «Լիբանանյան ճակատի» երկու հիմնական ուժերի՝ փաղանգավորների և շամունականների միջև: Պայքարը ծավալվում էր

⁹ Տե՛ս, Л. Л. Вольнов Ливанский дневник, с. 20.

այն հարցի շուրջը, թե նրանցից որը պետք է լինի առաջատար, դեկավարող ուժը: Պայքարից հազ-
թանակով դուրս եկան փաղանգավորները, որոնք
1980-ին պարտության մատնեցին շամունական-
ներին և նրանց ենթարկեցին իրենց:

«Լիբանանյան ճակատը» երբեք մեկուսացված չի եղել լիբանանյան մուսուլմաններից: Նրա հետ, մանավանդ քաղաքացիական պատերազմի ըս-
կըզքնաշրջանում, համագործակցում կամ էլ կա-
պեր էին պահպանում Բեյրութի և նրա շրջակայքի
մուսուլման-սուննիների, Լիբանանի հարավի և այլ
վայրերի մուսուլման-շիաների վերնախավը: Փա-
ղանգավորները և շամունականները, այսինքն՝
քրիստոնյա-մարոնիները օժանդակութուն էին ըս-
տանում ոչ միայն ԱՄՆ-ից, Իսրայելից և արև-
մջտյան այլ երկրներից, այլև արաբական հետա-
դիմութունից, հատկապես Սաուդյան Արաբիայից,
ամենապահպանողական մուսուլմանական երկը-
րից: 1976-ի հոկտեմբերի 25-ին, հանդես գալով
ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումում,
Լ. Ի. Բրեժնևը նշեց. «Լիբանանում ներքին ռեակ-
ցիայի ուժերը, որոնց զինում ու քաջալերում են
արևմտյան տերութունները և որոնք աշակցութուն
են ստանում Իսրայելի և Սաուդյան Արաբիայի
(ընդգծումն մերն է.— Ն. 2) կողմից, հարձակման
են անցել տեղական ազգային հայրենասիրական
ուժերի վրա»¹⁰: Այդ առումով խիստ ուշագրավ են
Ֆրանսիական «Աֆրիկ-Ազի» շաբաթաթերթում

¹⁰ Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 207:

տպված Խեղի Դուկարի «Ճշմարտության ժամը» հոդվածում պարունակվող տեղեկությունները Սաուդյան Արաբիայի և Լիբանանի սուլնի և շիա մուսուլմանական համայնքների ղեկավարների կապերի մասին փաղանդավորների հետ: Վերանայնում նրանք (Սաուդյան Արաբիայի ղեկավարները — Ն. Հ.) շատ ակտիվ կերպով, թեև դադարների, — գրում է Խեղի Դուկարը, — ամրապնդում էին փաղանդավորների ճամբարը, իհարկե, մարտիներին, բայց նաև սուլնի համայնքի ականավոր ներկայացուցիչների և, ըստ երևույթին, շիա համայնքի ղեկավարների աշակցությամբ: Հեղինակը, որ լավատեղյակ է բեմի ետևում կատարվող իրադարձություններին, միաժամանակ այն նիշտ միտքն է արտահայտում, որ թաթախ կուսակցության անդամների կողմից ղեկավարվող Լիբանանի գոյությունն անհնար կլիներ առանց տնտեսական կապերի արաբական աշխարհի հետ: Բայց այդ կողմից նրանք (փաղանդավորները — Ն. Հ.) վախենալու բան չունեն, քանի դեռ արաբական աշխարհում տիրապետող դեր է խաղում Սաուդյան Արաբիան»¹¹:

Հասկանալի է, որ քրիստոնյաների և մուսուլմանների կրոնական պատերազմ լինելու ղեկքում հազիվ թե Սաուդյան Արաբիան, որը հանդիսանում է իսլամի միջնաբերդը և որի տերիտորիայում են տեղադրված մուսուլմանական աշխարհի երկու

¹¹ «Afrique-Asie», Paris № 271, 5. 7. 1982.

կարևոր սրբավայրերը՝ Մեքքան և Մեդինան, թիկունք կանգնեք քրիստոնյաներին՝ ընդդեմ իր գավանակից մուսուլման եղբայրներին:

Եվ, վերջապես, մեր կողմից քննարկվող հարցը ճիշտ հասկանալու և պատկերը ամբողջացնելու տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացրնում հետևյալ պարագան: Փաղաքացիական պատերազմի հետևանքով Լիրանանի մայրաքաղաք Բեյրութը բաժանվեց երկու մասի՝ արևելյան և արևմտյան: Արևելյան Բեյրութը սովորաբար համարվում է քրիստոնեաբնակ և գտնվում է աջերի իշխանության ներքո, իսկ արևմտյանը՝ մուսուլմանաբնակ, որը գտնվում է ձախ, ազգային-հայրենասիրական ուժերի հսկողության տակ: Սակայն ըստ պաշտոնական տվյալների արևմտյան Բեյրութի բնակչության մոտ 40 տոկոսը քրիստոնյաներ են¹²: Լիրանանյան ճգնաժամի ամբողջ ընթացքում արևմտյան Բեյրութում լի արձանագրվել մուսուլմանների և քրիստոնյաների միջև բախման որևէ դեպք: Քրիստոնյաները այստեղ գտնվում են լիակատար անվտանգության մեջ և մուսուլմանների հետ ապրում են հաշտ ու խաղաղ: Քրիստոնյաները համանման վիճակում են Լիրանանի բոլոր այն վայրերում, որոնք գտնվում են ազգային-հայրենասիրական ուժերի հսկողության տակ: Դեռ ավելին. Լիրանանյան կոնֆլիկտի սուր պահերին արևելյան Բեյրութի շատ բնակիչ-

¹² «Правда», 18. 11. 1981.

ներ և նրանց թվում քրիստոնյաներ, շատ հաճախ անցնում էին արևմտյան Բելյուսթ, որպեսզի փրկվեին կործանումից:

Բացի այդ, արևելյան Բելյուսթի շատ բնակիչներն աշխատանքի վայրը գտնվում է արևմտյան Բելյուսթում: Այստեղ նրանք աշխատում են զանազան պետական հիմնարկներում, առևտրական ընկերություններում, բանկերում, ունեն իրենց ռեստորանները, սրճարանները, խանութները, և այլն: Այլ հանուն արդարության պետք է ընդգծել, որ արևմտյան, այսինքն մուսուլմանարնակ Բելյուսթի բնակիչները, տարբեր քաղաքական և այլ բնույթի կազմակերպությունները երբեք չեն փորձել խոչընդոտներ հարուցել թե՛ արևելյան և թե՛ արևմտյան Բելյուսթի քրիստոնյաների առջև՝ կատարելու իրենց աշխատանքային պարտականությունները:

Հասկանալի է, որ կրոնական պատերազմի դեպքում հազիվ թե հնարավոր լիներ նման մեծահոգության ու հանդուրժողականության դրսևորում, համերաշխության ոգու տիրապետում քրիստոնյաների և մուսուլմանների միջև:

Վերոհիշյալ փաստերի վերլուծությունից բխում է այն միակ ճիշտ եզրակացությունը, որ կիրանում կրոնական պատերազմի վերաբերյալ թեզը անհիմն է: Փորձել ձախ, ազգային-հայրենասիրական ուժերին ներկայացնել բացառապես մուսուլմանական ուժերի համախմբում, իսկ աշերին՝ որպես դատարյուն քրիստոնեական, երկրի ներսում և

Լիբանանից դուրս մուտուլմանների հետ ունեցած կապերից անշատ, նշանակում է ցուցաբերել շափաղանց պարզամիտ մոտեցում և շքմբոնել երեւոյթներին խորքում ընթացող պրոցեսները: Լիբանանյան կոնֆլիկտը հակասութունների մի բարդ հանգույց է, որոնց հիմքում, ինչպես նշվեց, քաղաքական միտումներ են:

Քաղաքացիական պատերազմի սկզբում զղալի հաշոդության հասան աշերը, որոնք հենց իրենք էլ սանձազերծեցին այն: Պատերազմի կատաղի թատերաբեմ էր դարձել Բեյրութը: Արյունալի բախումներ էին տեղի ունենում նրա շրջակայքում, Ջահլեում և Լիբանանի այլ վայրերում: Սակայն 1976-ի սկզբներից ազգային-հայրենասիրական ուժերին հաջողվում է փոփոխութուն մտցնել քաղաքացիական պատերազմի ընթացքի մեջ: Նրանք հարված հարվածի ետևից են հասցնում աշերին և արդեն նույն թվականի կեսերին Լիբանանի տերիտորիայի մոտ 80 տոկոսը դտնվում էր նրանց հսկողության տակ:

1976-ի հունիսին Լիբանան մտան սիրիական, այնուհետև արաբական մի շարք այլ պետութունների զորքերը, որոնց նպատակն էր, ինչպես նշված էր պաշտոնական հայտարարության մեջ, վերջ տալ արյունահեղությանը Լիբանանում: Նրանք կազմեցին միջարաբական խաղաղապահական ուժերը, որոնց միջուկը սիրիական զորքերն են: Թեև քաղաքացիական պատերազմին վերջ տրվեց, սակայն լիբանանյան կոնֆլիկտը չուծվեց և դրանից

հետո էլ շատ հաճախ տեղի են ունենում ռազմական բախումներ: Լիբանանյան կոնֆլիկտին մշտապես միջամտել և շարունակում են միջամտել ԱՄՆ-ը և Իսրայելը, որոնք բացահայտորեն պաշտպանում են աշերին, ռազմական, նյութական և ֆինանսական օգնություն ցույց տալիս նրանց: Իսրայելի կողմից Լիբանանի սովերենությունը խախտելը սովորական երևույթ է դարձել: Իսկ 1978-ի մարտին իսրայելական զորքերը ներխուժեցին Լիբանան և գրավեցին նրա տերիտորիայի զգալի մասը: Ծիշտ է, երեք ամիս անց Իսրայելը հարկադրված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանից, սակայն հարավում տերիտորիայի մի մասը հանձնեց ոչ թե Լիբանանի կառավարությանը, այլ դրեց իր ձեռնածու, լիբանանյան բանակի նախկին մայրը, դավաճան Սաադ Հադադի տնօրինության տակ: Քաղաքացիական պատերազմը և նրան հաջորդած անընդմեջ զինված բախումները շատ ծանր նստեցին Լիբանանի վրա: Զոհվեց մոտ 60 հազար, իսկ վիրավորվեց ավելի քան 200 հազար մարդ: Բնակչության զգալի մասը արտագաղթեց, մեծապես տուժեց երկրի տնտեսությունը: Քառսային վիճակը և անիշխանականությունը դարձան կյանքի սովորական երևույթներ: Լիբանանի կառավարության զործունեությունը անզամալուծված է: Նա մինչև օրս չի կարողանում իր իշխանությունը իրազործել ամբողջ երկրում և լիովին վերականգնել Լիբանանի սովերենությունը:



Լիբանանում սանձազերծված քաղաքացիական պատերազմը և դրան հաջորդած ճգնաժամը անմիջականորեն շոշափում են Լիբանանի անխտիր բոլոր համայնքների, այդ թվում նաև հայ համայնքի շահերը:

Հայ-լիբանանյան առնչություններն ունեն վաղընչական պատմություն և իրենց ակունքներով գնում են դարերի խորքը: Հայոց թագավոր Տիգրան Մեծը մ. թ. ա. 84—83 թթ. նվաճում է Սիրիան և Փյունիկիան (ինչպես այն ժամանակ կոչվում էր Լիբանանի ներկա տարածքը) և մտցնում իր թագավորութայն կազմի մեջ: Ստրաբոնի և Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ Տիգրան II-ը երեք հարյուր հազար զորքով շախչախում է Ասորիքի Սելևկյան Սելենեկ կամ Կլեոպատրա թագուհու դորքերը և իր թագավորությանը միացնում բացի Հյուսիսային Ասորիքից նաև Հարավային Ասորիքը՝ Դամասկոսի ընդարձակ շրջանը և Փյունիկիան: Նվաճված քաղաքների մեջ հիշատակվում է նաև Բերիթը (Բեյրութը) և այլ քաղաքներ¹³, Փյունիկիան հայկական թագավորության կազմում մնաց մինչև մ. թ. ա. 66 թվականը:

Հայ-լիբանանյան քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային շփումները զգալիորեն ուժեղացան VII դարում, երբ արաբները նվաճեցին

¹³ Տե՛ս, Լ. Մանանդյան, Փենական տեսության հայ ժողովրդի պատմության, Կ. Ա, Երևան, ՌՋԽԳ, էջ 152—155:

Լիրանանք, իսկ այնուհետև՝ Հայաստանը: Մտա-
 րկու դար Հայաստանը գտնվում էր արարակաճ
 խալիֆայութիան կազմում: Այս շրջանում զգալի
 թվով հայութիուն է հաստատվում խալիֆայութիան
 տարրեր մասերում, այդ թվում նաև Լիրանանի
 տարածքում, որը գործուն մասնակցութիուն է ունե-
 նում առևտրի աշխուժացման և արհեստների զար-
 գացման մարդերում: Թե՛ հայերի և թե՛ արարենե-
 րի, այդ թվում նաև լիրանանցիների համար մրդ-
 ձառնանքային ժամանակաշրջան սկսվեց, երբ նը-
 րանք ընկան օսմանյան բարբարոսական լծի տակ:
 Արևմտահայ հատվածի և արարենների ճակատագիրը
 բնորոշույ մինչև առաջին համաշխարհային պատե-
 րազմը դառնում է նույնը, իսկ նրանց հակառա-
 կորդը՝ միևնույն թուրք հարստահարիչը: XVII—
 XIX դդ. զգալի թվով հայութիուն է կուտակվում
 Լիրանանում, որտեղ նրանք հիմնում են վանքեր ու
 եկեղեցիներ, բացում դպրոցներ, նպաստում երկ-
 րամասի տնտեսական ու մշակութային առաջըն-
 թացին, զգալի դեր խաղում նրա հասարակական-
 քաղաքական կյանքում: Իսկ երբ 1861-ին Օսման-
 յան սուլթանը հարկադրված էր ընդունել այսպես
 կոչված Լիրանանի քորգանական ստատուսը, որով
 ճանաչվում էր Լիրանանի ինքնավարութիունը Օս-
 մանյան կայսրութիան շրջանակներում, ապա Լի-
 րանանի առաջին մութասարիֆ՝ կառավարիչ նը-
 շանակվեց հայազգի Կարապետ Արթին Չաուդյանը:
 Դաուդյանի կամ ինչպես սովորաբար հորշորջում
 էին նրան, Դաուդ-փաշայի դերը նշանակալի է Լի-

բանանում կարգուկանոն, տարբեր համայնքների միջև հաշտութիւն, փոխհասկացողութիւն և համագործակցութիւն հաստատելու, երկրի տնտեսական զարգացմանը նպաստելու և լուսավորութիւն տարածելու գործում, որ ընդունում ու բարձր են գնահատում արարները:

Լիբանանի մութասարիֆութիւնը պահպանվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Օգտվելով պատերազմից, երիտթուրքերի կառավարութիւնը վերջ դրեց Լիբանանի ավտոնոմ վիճակին: Ընդհանուր առմամբ այդ շրջանում, այսինքն՝ 1861—1914 թթ. Լիբանանյան մութասարիֆութիւնն ունեցավ ութ կառավարիչ՝ մութասարիֆ, որոնցից չորսը հայեր էին, այդ թվում նաև վերջինը՝ Հակոբ Գույումշյանը:

Առաջին համաշխարհային պատերազմն անլուր ողբերգութիւններ բերեց ոչ միայն արևմտահայերին, այլև արարներին, այդ թվում և Լիբանանին: Երիտթուրքերը փորձեցին ռազմական ուժով, զանգվածային ֆիզիկական բնաջնջման և տեղահանման ուղիով Օսմանյան կայսրութիւնում լուծել ազգային հարցը, առաջին հերթին հայկական և արարական հարցերը: Անդրադառնալով Օսմանյան կառավարողների այդ քաղաքականութիւնը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, արար հայտնի պատմարան Ամին Սաիդը գրում է. «Նրանք (Օսմանյան կայսրութիւնն ղեկավարները.— ն. շ) որոշեցին, որ հասել է հարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային շարժումներին՝ արա-

բական ազգայնականների շարժմանը Սիրիայում,¹⁴ Իրաքում և Հեշազում, և Հայկական շարժմանը Արևելյան Անատոլիայում»¹⁵, 1915-ի ապրիլին երիտթուրքերը իրագործեցին իրենց ցեղասպանության քաղաքականությունը հայերի նկատմամբ: 1915 թվականի դարնանը նրանք փորձեցին նույնը կիրառել Սիրիայում և Լիբանանում արաբների նկատմամբ: Զեմալ փաշայի կարգադրությամբ այնտեղ սարսափելի տեռոր սանձազերծվեց: Դամասկոսի և Բեյրութի հրապարակները ծածկվեցին կախաղաններով, իսկ փողոցները ներկվեցին արյունով: Մահապատժի ենթարկվեց մոտ 800 մարդ՝ արաբական ազատագրական շարժման երևելի գործիչներ, իսկ հազարավոր մարդիկ էլ ձերբակալվեցին: Երիտթուրքական շարդարարները, որոնք արդեն որոշակի փորձ էին ձևաք բերել հայերին կոտորելու և տեղահան անելու քաղաքականության մեջ, այդ սկզբունքները կիրառեցին արաբների նկատմամբ: Սիրիայում և Լիբանանում տասնյակ հազարավոր արաբներ իրենց ընտանիքներով սկսեցին փախչել: Բռնի տեղահանման ենթարկվեցին և արտաքսվեցին անապատներում հատուկ այդ նպատակներով ստեղծված համակենտրոնացման ճամբարները, որտեղ տիրող անմարդկային

¹⁴ Այդ ժամանակ Սիրիան որպես պատմա-աշխարհագրական հասկացողություն իր մեջ ներառում էր Լիբանանը և Պաղեստինը:

¹⁵ Амни Сайд. Восстания арабов в XX веке, пер. с араб., М., 1964, с. 79.

պայմանների հետևանքով հազարավոր կանայք, երեխաներ և ծերունիներ մահվան զոհ գնացին¹⁰։

Այսպես հայերը և արարները դարձան միևնույն քաղաքականությունից զոհը և հայտնվեցին համանման իրադրություն մեջ, որը չէր կարող չծնել փոխադարձ համակրանքի և միմյանց նեցուկ լինելու զգացմունքների։ Այդ հանգամանքը հետագա տարի-րին մեծ դեր խաղաց տարագիր հայ զանգվածների և տեղարևակ արարների միջև ճիշտ փոխհարաբերությունների հաստատման և հայ-արարական բարեկամությունից ամրապնդման գործում։

Վերջը նշվածից հետևում է, որ Լիբանանի տարածքում հայ համայնքները ապրել են մերթ վերելքի ու ծաղկման, և մերթ վայրէջքի ու անկման փուլեր։ Սակայն ժամանակակից հայկական համայնքը ձևավորվել է գլխավորապես առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդած տարիներին՝ 1915—1939 թվականների ընթացքում։ Այն արդասիք է գաղթականության երեք փուլերի։

Հայ գաղթականների առաջին և ամենահոծ ալիքը արարական երկրներ, այդ թվում և Լիբանան, տեղի ունեցավ հրիաթուրքերի կողմից Արևմտյան Հայաստանում 1915-ին կենսազործած ցեղասպանության քաղաքականությունից հետո։ Կոտորելով

¹⁰ Տե՛ս, ն. չ. Հովհաննիսյան, Լ. Ս. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917—1946), Ծրևան, 1975, էջ 23։

մտա մեկուկես միլիոն հայ, թուրքական շարդա-
բարները մնացածներին թշեցին արարական ա-
նապատները, հույս ունենալով, որ իրենց սկսած
արյունարբու գործը կվերջացնեն արարները: Սա-
կայն տեղի ունեցավ հակառակը: Արաբ ասպըն-
շական ժողովուրդը իր դռները բացեց հայ գաղ-
թականների առջև, նրաց նյութական օգնություն
և բարոյական աջակցություն ցույց տվեց: Ենթահիվ
արարների, այդ թվում և կիրանանի բնակչության
հումանիտական դիրքորոշման, հայ տարագիր-
ները փրկվեցին անխուսափելի մահվան ճիրաննե-
րից: Հայ գաղթականները ապաստան գտան կի-
րանանում, ինչպես նաև Սիրիայում, Իրաքում,
Եգիպտոսում, Հորդանանում և այլուր:

Հայ գաղթականության երկրորդ ալիքը կիրա-
նան ներհոսեց 1922-ին, երբ Ֆրանսիան, մինչ այդ
ստորագրած պայմանագրով դավաճանաբար Կի-
լիկիան գիշեց Թուրքիային, Կիլիկիայի հայ բը-
նակչությունը, վախենալով նոր ցեղասպանությու-
նից, նախքան թուրքական զորքերի Կիլիկիա մըտ-
նելը, հեռացավ այդ շրջանից: Նրա հիմնական մա-
սը սպաստան գտավ և բնակություն հաստատեց
Սիրիայում և կիրանանում:

Սվ, վերջապես, հայ գաղթականների երրորդ ա-
լիքը կիրանան մուտք գործեց 1939-ին: Դրա պատ-
ճառը դարձյալ Ֆրանսիայի տմարդի, իր հարցերը
մյուս ժողովուրդների հաշվին լուծելու քաղաքա-
կանությունն էր: Ֆրանսիան, որին պատկանում

էր, ինչպես նշել ենք, Սիրիայի կառավարման
մանդատը, 1939 թվականին, երկրորդ համաշխարհ-
հային պատերազմի նախօրյակին, Անդլիայի հրա-
հրամար և պաշտպանությամբ, Մյունխենի ոգով
գործարքի մեջ մտալ Թուրքիայի հետ և 1939-ի
հունիսի 23-ին կնքված պայմանագրով նրան զի-
ջեց սիրիական տերիտորիայի մի մասը՝ Ալեքսան-
դրիտի սանջակը: Ազգերի լիգայի կանոնադրու-
թյունը, որի անունից Ֆրանսիան ստացել էր
Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը,
արգելում էր ենթամանդատային երկրի, տվյալ
դեպքում Սիրիայի տերիտորիայի որևէ մաս զիջել
մեկ այլ պետության, հակառակ այդ երկրի ժողո-
վըրդի կամքի: Իսկ Սիրիայի թե՛ ժողովուրդը և
թե՛ կառավարութունը դեմ էր Ֆրանսիայի այդ
քայլին և մինչև օրս չի ճանաչում դրա օրինական
լինելը: Սակայն Ֆրանսիան անտեսեց Սիրիայի
տեսակետը և նրա տերիտորիայի անբաժան մասը
կազմող Ալեքսանդրիտի երկրամասը զիջեց Թուր-
քիային՝ հույս ունենալով նրան իր կողմը գրավել
առաջիկա երկրորդ համաշխարհային պատերազ-
մի ժամանակ, որի նախանշանները այդ ժամանակ
շատ հստակորեն էին ուրվագծվում: Սանջակի տե-
ղական բնակչութունը՝ արաբները և հայերը, ինչ-
պես նաև զգալի թվով քրդեր ու շերքեզներ, լցան-
կանալով կրկին ընկնել Թուրքական լծի տակ, հե-
ռացան այնտեղից: Արաբները հիմնականում հաս-
տատվեցին Սիրիայում, իսկ հայերը, որոնց հիմ-
նական կորիզը կազմում էին մուսալիմայիները,

Իրենց համար նոր բնակավայր ընտրեցին Լիբանանը: Ֆրանսիական մանդատային իշխանությունները Բեկասայի գաղտավայրում հայերին հատկացրին մի ոչ մեծ տարածություն, որտեղ նրանք հիմնեցին առաջին և առաջմ միակ հայկական դյուղը Լիբանանում՝ Այնճարը:

Ահա այսպիսի քաղաքական պայմաններում և այսպիսի ուղիներով մոտ 25 տարվա ընթացքում կազմավորվեց Լիբանանի հայ համայնքը: Ճիշտ է, դրանից հետո էլ հայերը մյուս, գլխավորապես հարևան արաբական երկրներից, եկել են Լիբանան: Սակայն դրանք արդեն ոչ թե բռնի տեղահան արված գաղթականներ են, այլ զանազան հանգամանքների բերումով Լիբանան տեղափոխված անհատներ: Այս բոլորի հետևանքով Լիբանանում համայնքի թվաքանակը հարաճուն կերպով աճել է, ի բացառությամբ 1975—1976 թվականների քաղաքացիական պատերազմի և նրան հաջորդած առաջին տարիները, երբ համեմատաբար ոչ մեծ արտագաղթ հղավ Լիբանանից այլ երկրներ:

Վերջնական և ամբողջական տվյալներ հայերի թվաքանակի վերաբերյալ հասկանալի պատճառներով չկան: Ուստի խոսքը միայն մոտավոր հաշվումների մասին է, որոնք վերաբերում են ինչպես հայերի թվաքանակին, այնպես էլ նրանց սոցիալ-դասակարգային կառուցվածքին և զբաղվածությամբ, որը խիստ անհրաժեշտ է հայ համայնքի տեղն ու դերը Լիբանանում որոշելու համար:

Լիբանանյան լավատեղյակ և մեծ հեղինակու-

թյուն վայելող «Մանդի Մոնինգ» շաբաթաթերթի
 տվյալներով հայերը «կազմում են Լիբանանի բը-
 նակչության ութ տոկոսը»¹⁷; Եթե ի նկատի ունե-
 նանք, որ Լիբանանի բնակչության թիվը 3 միլիո-
 նից մի փոքր ավելի է, ապա հայերի թիվը կկազ-
 մի մոտավորապես 240—245 հազար: Եիշտ է, այս
 տվյալները վերաբերում են 1979 թվականին: Սա-
 կայն 1982-ի փետրվար-մարտ ամիսներին գտնվե-
 լով Լիբանանում և ծանոթանալով հայ համայնքի
 վիճակին, կարող ենք հաստատել, որ այդ թիվը
 չի նվազել և հայերի թիվը այսօր Լիբանանում
 հասնում է մոտ 250 հազարի: Դրա շնորհիվ հայ
 համայնքը դարձել է Լիբանանի վեց հիմնական
 համայնքներից մեկը: Նա իր թվաքանակով դիշում
 է շիա, մարոնի և սուննի համայնքներին և մոտա-
 վորապես հավասար է դրուզ և քրիստոնյա-ուղղա-
 փառ համայնքներին:

Հայրերը տեղաբաշխված են Լիբանանի տար-
 բեր շրջաններում: Սակայն նրանց հիմնական մասը
 կենտրոնացված է Բեյրութում: Մոտավոր հաշվում-
 ներով Լիբանանի մայրաքաղաքի յուրաքանչյուր
 վեց բնակչից մեկը հայ է: Հայերը բնակվում են
 թե՛ արևմտյան և թե՛ արևելյան Բեյրութում: Մայ-
 րաքաղաքն ունի թաղամասեր, որոնք բնակեցված
 են հայերով, ինչպես Բուրջ Համուդը, Խալիլ Բադա-
 վին, Նոր Հաճընը, Աշրաֆիեն, Հայաշենը, Անթիլ-

17 «Monday Morning», vol; 8, N 378, September 17—23,
 Beirut, 1979, p. 26.

իասի շրջանը, Զալքան և այլն: Այստեղ մշտապես լսվում է հայ խոսքը, բազմաթիվ արհեստանոցներ, խանութներ, սրճարաններ, կինոներ և այլն կրում են հայերեն լեզվով գրված ցուցանակներ, իսկ շատ փողոցներ՝ հայկական անուններ:

Բացի Բելյուսթից, զգալի թվով հայեր ապրում են Տրիպոլիում, Լիբանանի երկրորդ քաղաքում և ներքան հարակից շրջաններում, Զահլեում, Սայդապում, Ալեյում, Բիրլոսում, Զունիում, Շուֆի, Մեթնի, Քեսրվանի շրջաններում, Բեկաայի դաշտավայրում և երկրի այլ շրջաններում: Եվ ամենուր հայերի և նրանց հյուրընկալող արաբների մինչև հաստատվել են բարեկամական հարաբերություններ, հիմնված միմյանց ազգային արժանապատվության փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա:

Սոցիալական շերտավորման առումով լիբանանահայ համայնքը բավականին խայտարդետ է և հետևյալ պատկերն է ներկայացնում: Լիբանանահայության ճնշող մեծամասնությունը կազմում են աշխատավորները, որոնք ընդգրկված են գլխավորապես արդյունաբերության, առևտրի, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում: Մտավոր հաշվումներով լիբանանահայերի մոտ 47 տոկոսն զբաղված է արդյունաբերության ոլորտում՝ ֆարրիկաներում, գործարաններում, շինարարության մեջ, պետական ձեռնարկություններում և այլն, 45 տոկոսը՝ առևտրի և սպասարկման ոլորտում: Պրանք հիմնականում իրենց փոքր ու համեստ խանութները, սրճարանները և նման բնույթի այլ ձեռ-

նարկություններն ունեցող մարդիկ ևն: Լիբանանահայերի մոտ 2 տոկոսը՝ 5000 մարդ, զբաղված է գյուղատնտեսութեան մեջ, մենք ի նկատի ունենք գլխավորապես Այնճարի հայ բնակչութեանը: Իսկ 2 տոկոսն էլ կազմում է մտավորականութեանը՝ ուսուցիչներ, մշակութային միությունների աշխատողներ, գրողներ, բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ և այլն: Լիբանանահայութեան մնացած 4 տոկոսը պատկանում է արդյունաբերական և առևտրա-ֆինանսական միջին և բարձր խավին:

Լիբանանում հաստատված հայերը, հաղթահարելով առաջին տարիների դժվարութեանները կարողացան ոտքի կանգնել և ձեռնամուխ լինել շինարար աշխատանքի՝ հանուն իրենց հյուրընկալող երկրի առաջադիմութեան: Եվ այսօր բոլորի կողմից ընդունված և չվիճարկվող տեսակետ է, որ մեծ է հայ համայնքի ներդրումը Լիբանանի առաջընթացի մեջ և նա խաղում է նշանակալի դեր մերօրյա Լիբանանի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

Հայերը մեծապես նպաստեցին արհեստների զարգացմանը և արդյունաբերական նոր ճյուղերի ձևավորմանը Լիբանանում: Տնտեսագետների մոտ վաղուց ընդունված տեսակետ է, որ հայերը մեծ ծառայութեան են մատուցել Լիբանանում ժամանակակից իմաստով արդյունաբերութեան ստեղծելու գործում: Բեյրութի Ամերիկյան համալսարանի նախկին պրոֆեսոր Ա. Մեյերը Լիբանանում և արաբական մյուս երկրներում արդյունաբերական

Հին ձևերի փոխարինումը նորերով կապում է եվրոպացիների և հայերի անվան հետ¹⁸, իսկ արարանտեսագետ Յուսուֆ Սայըղը հատկապես ընդդժում է հայերի տեխնիկական մեծ ունակութունները և փորձառութունը, որոնք որոշակի ազդակ են հանդիսացել լիբանանի արդյունաբերության զարգացման գործում¹⁹։

Մոտավոր հաշվումներով, քաղաքացիական պատերազմի նախորդած տարիներին հայկական բուրժուազիային պատկանում էր լիբանանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18 և միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ երկրի իմպորտի մեջ հայ կապիտալի բաժինը կազմել է 10 տոկոս։ 60-ական թվականներին լիբանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբանանյան լիրայից 125 մլն լիբանանյան լիրան կամ 33 տոկոսը պատկանում էր հայ արդյունաբերական կապիտալին²⁰։

Իատելով վերջին տվյալներից, որոնք վերաբերում են 1979 թվականին, հայ համայնքը, շնայած քաղաքացիական պատերազմի արհամիրքներին, կարողացել է պահպանել իր դիրքերը երկրի տնտե-

¹⁸ A. Meyer, *Enterprenership: the missing link in the arab states?*—«Middle East Economic Papers», Beirut, 1954, p. 124—125.

¹⁹ Yusif Sayigh, *Enterpreners of Lebanon*, Cambridge, 1962, p. 71.

²⁰ «Մեր նշանաբանն է Հառաչ», *Բեյրութ*, 21.8.1960:

սուժյան մեջ, նույնիսկ մի փոքր ամրապնդելու
«Թեև նա (լիբանանահայ համայնքը:— Ն. Հ.),—
նշում է «Մանդի Մոնիթը»-ը— կազմում է լիբա-
նանի բնակչության 8 տոկոսը, սակայն տալիս է
ազգային արտադրանքի 25 տոկոսը»²¹։ Սա
շատ կարևոր հանգամանք է հայ համայնքի տեղն
ու դերը լիբանանի տնտեսական կյանքում, մանա-
վանդ կոնֆլիկտի տարիներին, ճիշտ գնահատելու
համար և խոսում է այն մեծ կշռի մասին, որ նա
ձեռք է բերել ժամանակակից լիբանանի տնտեսա-
կան համակարգում։

Զգալի է նաև հայ համայնքի կշիռը լիբանանի
քաղաքական կյանքում։ Նա լիբանանյան պառլա-
մենտում այսօր ներկայացված է 5 հայ դեպու-
տատներով։ Բացի այդ, լիբանանում գոյութուն
ունեցող բավականին քարդ ու խճճված ընտրական
սիստեմի հետևանքով, 21 դեպուտատի ճակատա-
գիրը զգալի շափով կախված է հայ ընտրողի դիրք-
որոշումից։ Այսպիսով, հայ համայնքը որոշող ազ-
դեցութուն ունի լիբանանյան պառլամենտի դե-
պուտատների մոտ մեկ քառորդի ընտրման գոր-
ծում։ Լիբանանի կառավարության մեջ մինիստրի
մեկ պաշտոն մշտապես պատկանում է հայ հա-
մայնքի ներկայացուցչին։ Եվ, վերջապես, լիբա-
նանահայ քաղաքական կուսակցութունները, յու-
րաքանչյուրն ըստ իր քաղաքական կողմնորոշման

²¹ «Monday Morning», vol. 8, N 378, September 17—23
1979, p. 26.

և դժի, կապերի մեջ է և կամ համազործակցում է լիբանանյան համապատասխան կուսակցութունների հետ:

Լիբանանահայ համայնքում բավականին լավ հիմքերի վրա է դրված կրթական-մշակութային կյանքը: Ամբողջ Լիբանանում գործում են 60-ից ավել հայկական դպրոցներ, Հայկազյան կոլեջը, որը հիմնվել է 1955-ին և ունի բարձրագույն հաստատության ստատուս: Այն պաշտոնապես ճանաչել է Լիբանանի կառավարությունը և նրա կողմից արվող դիպլոմներն ու աստիճաններն հավասարեցված են Լիբանանի համալսարանի դիպլոմներին ու աստիճաններին: Դպրոցների մեծ մասը, այդ թվում և Հայկազյան կոլեջը, գտնվում են Բեյրութում: Բացի մայրաքաղաքից հայկական դպրոցներ են գործում նաև Տրիպոլիում, Ջահլեում, Այնճարում և Ալեյում:

Լիբանանում լույս են տեսնում 25 հայերեն պարբերականներ՝ օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր և այլն: Լիբանանում է տեղադրված Մեծի Տանն կրթիկիտ կաթողիկոսարանը: Եթե այս բոլորին ավելացնենք բազմաթիվ մշակութային միությունների, մարզական ակումբների գոյությունը, ապա կարող ենք ասել, որ ակնառու են լիբանանահայերի նվաճումները մշակութային կյանքի բռնադավառում:

Ահա այս բոլորի հետևանքով հայ համայնքը դարձել է Լիբանանի քաղաքական տնտեսական և մշակութային կառուցվածքի օրգանական մասը և

հասարակական-քաղաքական կյանքի մշտական գործոններից մեկը: Ուստի և Լիբանանի տարբեր քաղաքական ուժեր հարկադրված են հաշվի նստել հայ համայնքի դիրքորոշման հետ և հաշվի առնել նրա շահերը: Դեռ ավելին, այդ ուժերից յուրաքանչյուրը ձգտում է իր կողմը գրավել Լիբանանի հայերին՝ ղեկավարվելով իր դիրքերն ամրապնդելու միտումով:

Քաղաքացիական պատերազմի բռնկումը սկզբից դժվարին երկընտրանքի առջև կանգնեցրեց լիբանանահայ համայնքը: Նա, ինչպես և Լիբանանի մյուս համայնքները, պետք է հստակորեն որոշեր իր դիրքը նրա հանդեպ, դրանից բխող բոլոր հետևանքներով: Նրա առջև երկու հեռանկար կար. կամ մասնակցել լիբանանյան արարների հղթարասպան պատերազմին, կամ էլ գրավել այլ, ավելի ճկուն դիրք, որը հնարավորութուն է կրնձեռեր հայ համայնքին լավագույնս ծառայել խաղաղության և Լիբանանի պետության սուվերենության, միասնականության և տերիտորիալ ամբողջականության պահպանմանը:

Ի՞նչ կարող էր տալ հայերին քաղաքացիական պատերազմին մասնակցելը:

Լիբանանահայերի մասնակցելը սանձազերծված զինված պայքարին նրա մեջ կներգրավեր տասնյակ հազար նոր մարդկանց, կնպաստեր քաղաքացիական պատերազմի շրջանակների ընդլայնմանը և ուժեղացմանը, ավելի կբորբոքեր այն և կխո-

բացներ պառակտումը և վիճը լիբանանյան տար-
բեր համայնքների և խմբավորումների միջև:

Հայերի մասնակցութունը պատերազմին և նը-
բան հաշորդած կոնֆլիկտին անխուսափելիորեն
կհանգեցնէր լիբանանահայ համայնքի երկփեղկ-
մանը, նրա պառակտմանը, քանի որ նա քաղա-
քական առումով միասեռ չէ: Նրա ներսում կան
տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղութուն-
ներ: Այդ պատճառով էլ կասկածից վեր է, որ մի
մասը հանդես կգար լիբանանի ձախ, ազգային-
հայրենասիրական ուժերի կողքին, իսկ մյուս մասն՝
աշերի: Իսկ դա նշանակում է, որ արաբների եղ-
բայրասպան պատերազմի կողքին կծագեր լիբա-
նանահայերի եղբայրասպան պատերազմը, որն ա-
վելի կբարդացնէր դրութունը:

Այլ, վերջապես, մի կարևոր հանգամանքի վրա
ևս անհրաժեշտ է ուշադրութուն դարձնել: Լիբա-
նանում ծագած քաղաքացիական պատերազմն
ընթանում էր էթնիկական առումով միևնույն հա-
մայնքների՝ արաբական համայնքների միջև, դա
պատերազմ էր քաղաքական տարբեր կողմնորո-
շում ունեցող արաբների միջև: էթնիկական առու-
մով այլ խմբի՝ հայերի մասնակցելը պատերազմին
կարող էր թյուրիմացութունների տեղիք տալ, փո-
խել պատերազմի բնույթը և նրան տալ ազգային
գունավորում, որին, ի դեպ, ձգտում էին փաղան-
գավորների և շամունականների ղեկավարները:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները,
հայ համայնքն արտահայտվեց քաղաքացիական

պատերազմին մասնակցելու դեմ և որպէս իր պաշտոնական դիրքորոշում հռչակեց դրական շեղութեան քաղականութիւնը: Այն լիակատար հավանութիւն գտաւ լիբանանահայ աշխատավորների և մտավորականների կողմից և դարձաւ ողջ համայնքի ժողովրդական մասսաների հիմնական քաղաքական կողմնորոշումը:

Դրական շեղութեան քաղաքականութիւնն ընդունեց նաև միջին և խոշոր արդյունաբերական և առևտրա-ֆինանսական բուրժուազիան: Դա բացատրւում է նրանով, որ նրա գործունեութեան ոլորտըն ընդգրկում էր լիբանանի բոլոր շրջանները, նրան պատկանող ձեռնարկութիւնները և ընկերութիւնները տեղադրւած էին Բեյրութի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան, այսինքն՝ աջ և ձախ ուժերի միջև բաժանւած հատվածներում: Կոնֆլիկտին մասնակցելու դեպքում հայ բուրժուազիան մտիտեւում էր, որ ինքը կարող է ամեն ինչից զրկվել, սնանկանալ և ասպարեզից դուրս գալ, մինչդեռ շեղութեանալու դեպքում նա հույս ուներ փրկել այն ամենը, ինչ պատկանում էր իրեն և պահպանել իր տնտեսական և քաղաքական դիրքերը լիբանանում: Ստեղծված կոնկրետ քաղաքական իրադրութեան պայմաններում շեղութեան քաղաքականութիւնը ամենից ավելի էր համապատասխանում հայ բուրժուազիայի և ընդհանրապէս վերին խավի շահերին:

Եթե ի մի բերելու լինենք, ապա կարող ենք հավաստել, որ հայ համայնքի կողմից ընդունւած

դրական շեղորոթյան քաղաքականութիւնն օրյեկ-
տիվորեն նպաստում էր զինված առճակատման
շառավիղի կրճատմանը և լիբանանյան կոնֆլիկ-
տի շրջանակների որոշակի սահմանափակմանը:
Մյուս կողմից այն հնարավորութիւն էր տալիս
հայ համայնքին՝ ծավալելու ակտիվ գործունեու-
թիւն կոնֆլիկտի փաղափական կարգավորման հա-
մար, հաշվի առնելով կոնֆլիկտին մասնակից բո-
լոր կողմերի օրինական շահերը, ելակետ և հիմք
ունենալով լիբանանի անկախութեան, սովետական-
թիւն և տերիտորիալ ամբողջականութեան պահ-
պանումը: Ուստի դրական շեղորոթյան քաղաքա-
կանութիւնը որևէ ընդհանուր բան չունի կողմնա-
կի դիտորդի դիրքորոշման հետ:

Իրանով իսկ հայ համայնքի դրական շեղորո-
թիւնը վեր էր ածվում ակտիվ գործոնի և ձևեր
բերում դրութեան կայունացմանը, խաղաղութեան
վերահաստատմանը և երկրի ամբողջականութեան
պահպանմանը նպաստող նշանակութիւն:

Հայ համայնքի որդեգրած քաղաքականութիւնը
հենց այդպես էլ ընկալեցին լիբանանի հասարա-
կական-քաղաքական խմբավորումների և հա-
մայնքների ճնշող մեծամասնութիւնը և առաջին
հերթին ազգային-հայրենասիրական ուժերը՝ կո-
մունիստական կուսակցութիւնը, առաջադիմական
սոցիալիստական կուսակցութիւնը, սիրիական
ազգային-սոցիալական կուսակցութիւնը և այլ
կազմակերպութիւններ: Լիբանանի ճգնաժամի
ամբողջ ընթացքում նրանց կողմից չի եղել որևէ

դատապարտման կամ կշտամբանքի խոսք հայ համայնքի հասցեհին նրա ընդունած դրական շեղոքության քաղաքականության կապակցությամբ։ Ընդհակառակն, նրանք մշտապես պաշտպանել են այդ գիծը։ Լիբանանի կոմունիստական կուսակցության օրգան «ան-նիդա» թերթը հայ համայնքի ընդունած դիրքորոշումը բնութագրեց որպես կամուրջ, որը նպաստում է Լիբանանի միասնության պահպանմանը։ Լիբանանի սարքեր ու մերը բանի գնում, այնքան ավելի ճիշտ էին ըմբռնում և բարձր գնահատում հայերի դրական շեղոքության քաղաքականությունը։ Այդ առումով ուշագրավ է «Մանդի Մոնիթինգի» էջերում արտահայտված կարծիքը, որը հարկ ևնք համարում լրիվ մեղքերել։ «Հայ համայնքը,— գրում է թերթը,— խաղում է կրկնակի դեր՝ կայունացման և միավորման։

Կայունացման դերը նա կատարում է անտեսական և սոցիալական առումով։ Թեև նա ներկայացնում է Լիբանանի բնակչության միայն ութ տոկոսը, սակայն տալիս է ազգային արտադրանքի 25 տոկոսը։

Միավորման դերը նա խաղում է քաղաքական, ազգային մակարդակով։ Դա միակ համայնքն է, որ մնաց գործող թե՛ արևելյան և թե՛ արևմտյան Բեյրութում, միակ համայնքը, որի դերը շկատաբեցին Լիբանանի մյուս համայնքների ժողովրդական շարժումները։ Հայերին դուրս շնորհից արևելյան կամ արևմտյան Բեյրութից։ Այս եզակի դիր-

բը նրանց հնարավորութիւնն է ընձեռում առանձնահատուկ դեր կատարելու»²²։

Բոլորովին այլ էր լիբանանյան աշերի և առաջին հերթին փաղանդավորների ու ահրարների (շամունահանների) դիրքը։ Նրանք ուժեղ ճնշում են գործադրում հայ համայնքի վրա, որ նա հրաժարւի դրական շեղորոթյան քաղաքականութիւնից և միանա սփրանանյան ճակատին»։ Սկզբում նրանք փորձեցին որպէս խայժ օգտագործել քրիստոնյաների նկատմամբ այսպէս կոչւած մուսուլմանական «վտանգի» թեզը, որը, իբր, անհրաժեշտ է դարձնում բոլոր քրիստոնյաների միավորումը միեւնույն ճակատում։

Ինչպէս նշել ենք, լիբանանյան կոնֆլիկտը փորձել ներկայացնել որպէս կրօնական պատերազմ քրիստոնյաների և մուսուլմանների միջև, կեղծիք է։ Ուստի և հայ համայնքը մերժեց լիբանանյան աշերի բոլոր փորձերը՝ իրեն ներգրավել պատերազմի մեջ և շարունակեց հավատարիմ մնալ դրական շեղորոթյան քաղաքականութեանը։ Լէյզ առթիւ «Եղվեստիան» նշել է. «Քաղաքացիական պատերազմի տարիներին հալկական համայնքը, շնայած աշերի և խսրայելական գործակալների բոլոր ջանքերին, թույլ չտվեց, որ իրեն ներգրավեն արշունահեղ կոնֆլիկտի մեջ։ Քաղաքացիական պատերազմին հայ քրիստոնյաների

²² «Monday Morning», vol. 8, N 378, September 17—23, 1979, p. 26.

շմանակցելը ալիւորդ անգամ ապացուցում էր իսրայելյան պրոպագանդայի այն սնդուկների կեղծութունը, թե իբր Լիբանանի իրադարձութունները բացատրվում են «կրոնական» դրդապատճառներով»²³:

Զախոզման մատնվելով այս հարցում, լիբանանյան աշիրը նոր հալածանք սկսեցին հայերի դեմ, այս անգամ օգտագործելով նրանց ազգային պատկանելութունը: Տարբեր ձևերով սկսվեց հուլիվել այն միտքը, թե հայերը այս երկրի, այսինքն՝ Լիբանանի մեջ, օտարներ են, լավ քաղաքացիներ չեն, որ նրանց մուտքը Լիբանան ապահովել է մարտի վերնախավը՝ «հակառակ իսլամների ընդդիմության», իսկ այժմ հայերը հավատարիմ չբնացին իրենց «բարեբարներին»: Ալ-Քաթաիբ կուսակցության օրգան «Լըվելը» գրում էր, որ հայերը լիբանանցի չեն լինի, եթե չկոչեն պաղեստինցիների դեմ²⁴: Նույն հանգիստ էին կրկնում նաև շամունականները: Հայերի հասցիին նման անհիմն մեղադրանք ներկայացնելու նպատակն էր բորբոքել ազգային կրթերը և ատելութուն սերմանել արաբական հետամնաց խավերի մոտ հայերի նկատմամբ — ինչպես Լիբանանում, այնպես էլ արաբական մյուս երկրներում, լիբանանյան կոնֆլիկտի մեջ արհեստականորեն ազգային մոմենտ մտցնել, շեղել արաբների ուշադրու-

²³ «Известия», 19. XI. 1978.

²⁴ Տե՛ս, «Կանչ», Բելյութ, 22. IX. 1979.

թյունը աշերի կողմից կիրառվող հետադիմական քաղաքականությունից, որն ուղղված է կիրանանի և արարական մյուս երկրների ազդային շահերի դեմ, թաքցնել իրենց կապերը ամերիկյան իմպերիալիզմի և իսրայիլական ազրեսորների հետ:

Արարական դեմոկրատական հասարակայնությունը զայրութով դատապարտեց լիբանանյան աշերի հայահալած քաղաքականությունը: Արտահայտելով նրանց տրամադրությունները, Բեյրութի «սա-Սաֆիր» թերթը իրավացիորեն ընդգծում էր, որ աշերը, սանձազերծելով հակահայկական արշավ, դեկավարվում են թույլ մեղ հետ չէ, նա մեր դեմ է»²⁵ սկզբունքով: Լիբանանի դեմոկրատական ուժերը անում էին ամեն բան, որ տեղի շունենան բախումներ հայերի և աշերի միջև: Սակայն դա չէր մտնում վերջիններիս ծրագրերի մեջ: Նրանք որոշեցին ճակատային գրոհով լուծել հարցը, ստիպել, որ հայերը հրաժարվեն դրական շեղությունների քաղաքականությունից և միանան իրենց՝ ընդդեմ կիրանանի ազդային-հայրենասիրական ուժերի:

1978-ի հոկտեմբերի 1-ին փաղանգավորների և շամունականների ղինված բանդաները հարձակում սկսեցին արևելյան Բեյրութի հայկական թաղերի վրա: Հոկտեմբերի 1—7-ը ծանր հրետանային ռումբակոծման ենթարկվեցին Բուրջ Համուդ, Դորա, Խալիլ Բեդևի, Նոր Հաջրն, Հայաշեն, Աշրաֆիհ, Մար-Մխայիլ, Մար-Յուսուֆ, Նահր էլ-Մոթ, Զալքա

²⁵ «սա-Սաֆիր», Բեյրութ, 24. IX. 1979:

և այլ հայարնակ շրջանները: Աչերի ղինվորական ջոկատները ներխուժեցին վերոհիշյալ հայկական թաղերը և Եփողոցները վերածեցին տեւորի և մահվան թագավորության, իրենց շարությունը թափելով խաղաղ բնակիչների գլխին»²⁶: Հայության դեմ ղինված հարձակումներ եղան նաև Բիրլստում, Մեթնում, Քեսրվանում և այլ վայրերում: Գաղազած հրոսակները պայթեցնում և քանդում էին հայերին պատկանող տները, մշակութային հաստատությունները, գործարաններն ու արհեստանոցները: Տասնյակ հազարավոր հայեր դարձան փախստականներ, որոնք ապաստան գտան Տրիպոլիում, Այնճարում, Ջահլեում, Անթիլիասում, Ջրեյլում, արևմտյան Բեյրութում և այլ վայրերում: Ոմանք ապաստան գտան Սիրիայում՝ Հալեպում, Դամասկոսում, Լաթակիայում, Կիպրոսում և այլուր: 1978-ի հոկտեմբերի 26-ին մարդկային խիղճը կորցրած շարդարարները Բիքֆայայում պայթեցրին լիրանանահայության կողմից 1915-ի եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցրած հուշարձանը: Ստեղծվեցին մղձավանջային օրեր արևելյան Բեյրութի հայկական թաղերի բնակիչների համար: Հոկտեմբերյան արյունալի օրերին զոհվեց 80 և վիրավորվեց 350 հայ²⁷: Մեծ էր նաև հայ համայնքին հասցված նյութական վնասը: Այդ օրերին ավերվեց և վնասվեց հայերին պատկանող մոտ

²⁶ «Известия», 19. XI. 1978.

²⁷ «Կանչ», 14. X 1978.

3000 տուն, 55 գործարան և արհեստանոց²⁸, կողոպտվեցին հարյուրավոր խանութներ ու պահեստներ, մնացվեցին 28 դպրոցներ, 16 եկեղեցիներ, մատուռներ և այլն: Թեև ուշացումով, սակայն հայ համայնքը կարողացավ այնուամենայնիվ որոշ ինքնապաշտպանություն կազմակերպել: Ե՛րեսիներու և խառնակութեանց ամենածանր օրերուն, դիշեր ցերեկ, զենք ի ձեռի հայ արի տղաք պահակ կեցան հայ ժողովուրդին: Հայկական թաղերու մուտքին, փողոցներու անկյուններուն, հայ տաներու և ազգային հաստատություններու առջև արիարար կանգնեցան անոնք և թույլ չտվին, որ խառնակիչ, պատեհապաշտ ձեռքեր տեր դառնան իրենց ժողովուրդի գավակներուն ձեռքերով շինված տունին ու գործին, ինչքին ու ստացվածքին և իրենց ազգի հոգևոր, կրթական, մշակութային և ազգային հաստատություններուն»²⁹: Եթե հայ համայնքի ղեկավարները լինեին ավելի հեռատես և ժամանակին ու լավ նախապատրաստվեին, ապա, կտակած չկա, որ լիբանանահայության կորուստներն ավելի նվազ կլինեին:

Այդ ծանր օրերին հայ գաղթականությանն օգնություն ցույց տալու գործն իրենց վրա վերցրին արևմտյան Բեյրութի, ինչպես նաև լիբանանի այլ

²⁸ «Ап-Ннда», Бейрут, 28. 1. 1979.

²⁹ «Համառոտ պատկեր լիբանանահայության տաղնապին և վերականգնումի կամքին ու շանքին», տպ. Անթիլիաս, 1978, էջ 9:

շրջանների հայերը: Նրանք ապաստան տվեցին գաղթականներին և հոգացին նրանց նյութական կարիքները: Տրիպոլիում գաղթականների տրամադրութեան տակ դրվեց տեղի հայկական դպրոցի և ահումբի շենքը: Մոտ 5000 գաղթականներ սպասապարվեցին Այնճարում, իսկ արևմտյան Քեյրութում շատ հայերի համար օթևան ծառայեց Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնի շենքը:

Հայերի հետ միասին գաղթականներին օգնութեան ձեռք մեկնեցին արաբ դեմոկրատական ուժերը, մի անգամ ևս հավաստելով իրենց ասպընջական ոգին և եղբայրական զգացմունքները հանդեպ լիբանանահայութեանը:

Այսպէս, Տրիպոլիում հաստատված 500 հայ գաղթական ընտանիքների կարիքները միասին հոգում էին հայկական և արաբական ազգային կազմակերպութունները: Նրանց վիճակը թեթեւացնելու համար Լիբանանի Ազգային շարժումը հատկացրեց 35 հազար լիբանանյան լիրա: Ազգային շարժումը անհրաժեշտ նյութական օգնութեան ցույց տվեց Ջրեյլում և նրա շրջանում հաստատված 300 հայ ընտանիքներին: Այդ օգնութեան մեջ մտնում էին բազմաքանակ ծածկոցներ և մեծաքանակ սննդեղեն: Դրանից զատ Ազգային շարժման գաղթականների կոմիտեն հայ գաղթականների օգնութեան մարմնին հանձնեց 200 ընտանիքներին օգնելու համար սննդամթերք և առաջին անհրաժեշտութեան ալլ իրեր, որոնք բաժան-

վեցին արևումյան Բեյրութ, Ալնէար, Բհամդուն և Ալեյ հաստատված հայ դաղթականներին³⁰։

Աշերի շարագործությունները կիրանանի ազգային-հայրենասիրական ուժերի և բնակչության, ինչպես նաև համաշխարհային հասարակայնության խոր վրդովմունքն առաջացրին։ Կոմունիստական կուսակցությունը և Ազգային շարժման մեջ մտնող մյուս ուժերը, սուննի, շիա, ուղղափառ, կաթոլիկ, դրուզ, բողոքական համայնքները, շատ ականավոր քաղաքական գործիչներ խստորեն դատապարտեցին փաղանգավորների և շամունականների վայրագ գործողությունները հայերի նկատմամբ, պահանջելով դադարեցնել ուղղական հարձակումը լիրանանահայ համայնքի վրա։

Լիրանանի նախկին պրեմիեր-մինիստր Ռաշիդ Սուհըր Բեյրութում տողերիս հեղինակի հետ ունեցած դրույցի ընթացքում, նշավակելով աշերի հակահայ քաղաքականությունը, ընդգծեց. «Մենք, արաբներս, խոր հարգանք ենք տածում հայերի նկատմամբ, որոնք շատ բան են արել կիրանանի տընտեսական և կուլտուրական զարգացման համար։ Հայ համայնքը կիրանանի օրինական համայնքներից մեկն է, իսկ հայերը՝ այս երկրի օրինական քաղաքացիները և մեր եղբայրները։ Ուստի մենք մեր պարտականությունն ենք համարում պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին»։

Ի պաշտպանություն լիրանանահայություն հան-

³⁰ Տե՛ս, «Կոմունիստ» 14. 10. 1978, 21. 10. 1978.

դես եկալ սովետական հասարակայնութիւնը: Այդ-
 օրերին մեծ մտահոգութիւն էր ապրում Մայր
 Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի աշխատա-
 վորութիւնը: Հանրապետութեան բոլոր քաղաքնե-
 րում և գյուղերում, գործարաններում, ուսումնա-
 կան հաստատութիւններում և հիմնարկութիւննե-
 րում բողոքի միտինգներ էին տեղի ունենում, որի
 ժամանակ հայ աշխատավորութիւնը իր խոր ցա-
 սումն էր արտահայտում լիբանանյան աշերի բար-
 բարոսական գործողութիւններին դեմ և պահանջում
 դադարեցնել ամեն տեսակի բռնութիւններ հայերի
 նկատմամբ: Մեծ արձագանք գտավ Ասիայի և
 Աֆրիկայի համերաշխութեան սովետական կոմի-
 տիի հայտարարութիւնը, որտեղ շեշտված էր, որ
 աշերի գործողութիւնները լիբանանահայերի նը-
 կատմամբ թգնոցիդի հանցագործութիւնը կան-
 խելու և դրա համար պատժելու վերաբերյալ մի-
 ջազգային կոնվենցիայի բիրտ խախտում է և ուղ-
 դակի հակասում է ՄԱԿ-ի համապատասխան
 որոշումներին³¹: Այնուհետև նշվում էր, որ այս
 ամենի համար լիբանանյան աշերի հետ միասին
 պատասխանատւութիւն են կրում իմպերիալիստա-
 կան ուժերը, Իսրայելը և նրանց գործակալները:
 Պարզ էր, որ նման դրութեան հետ չէին կարող
 հաշտվել սովետական մարդիկ: Արտահայտելով
 մեր բազմազգ պետութեան հասարակայնութեան
 կարծիքը, Ասիայի և Աֆրիկայի համերաշխութեան

³¹ «Սովետական Հայաստան», Երևան, 24. XI. 1978:

սովետական կոմիտեն հայտարարում էր. «Սովետական մարդիկ ամենայն վճռականութիւնով դատարարում են Լիբանանի խաղաղ բնակչութիւնն կատմամբ բիրտ կամայականութիւնը, որին այս անգամ զոհ է դարձել հայ համայնքը: Արտահայտելով սովետական մարդկանց մարդասիրական զգացմունքները Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխութիւն սովետական կոմիտեն անհրաժեշտ է համարում, որ բոլոր միջոցները ձեռնարկվեն այդ կամայականութիւնը դադարեցնելու, Լիբանանում իրադրութիւնը նորմալացնելու համար»³²:

Արարական և համաշխարհային հասարակայնութիւնն ճնշման տակ Լիբանանյան աշերը ստիպված էին դադարեցնել ռազմական գործողութիւնները հայերի դեմ և իրենց զինված բանդաները դուրս բերել հայկական թաղամասերից: Դա հնարավորութիւն տվեց հայ զաղթականներին վերադառնալ իրենց բնակավայրերը և ձեռնամուխ լինել բանդված տներին, դպրոցներին, արհեստանոցներին և այլ հաստատութիւններին վերաշինման և վերանորոգման գործին: Հայ համայնքին հասցված ծանր վերքերի բուժման գործում զգալի դեր խաղաց Մայր Հայրենիքը:

Սովետական Հայաստանի կառավարութիւնն որոշմամբ Լիբանանահայութիւնը ցուլց տրվեց շոշափելի տնտեսական օգնութիւն: Քաղաքացիական

³² Նույն տեղում:

պատերազմից տուժված հայերին Մայր Հայրենիքը ուղարկեց սննդամթերք, դեղորայք, հագուստեղեն, կոշիկեղեն և առաջին անհրաժեշտութիւնն այլ առարկաներ: Այդ օգնութիւնից օգտվեցին մի քանի տասնյակ հազար հայեր: Ղեկավարվելով եղբայրական, ինտերնացիոնալիստական զգացմունքներով, օգնութիւն ցույց տրվեց նաև պատերազմից տուժած մի քանի հարյուր արաբ բնտանիքներին: Մեծ օգնութիւն ստացան հայկական դպրոցները: Մայր Հայրենիքը նրանց տրամադրեց դասագրքեր, գրենական պիտույքներ, լաբորատոր սարքավորումներ, երաժշտական գործիքներ, մարդական հանդերձանք և այլն: Զգալի թվով լիբանանահայեր, որոնք վիրավորվել էին կամ որոնց առողջութիւնը տուժել էր հայ համայնքի վրա կատարված հարձակումների ժամանակ, բուժվեցին Սովետական Հայաստանի հիվանդանոցներում և առողջարաններում: Կառավարութիւնն որոշմամբ սովորականից ավելի շատ լիբանանահայ դպրոցականներ հանգստացան Սովետական Հայաստանի՝ Մաղկաձորի, Հանքավանի և Կիրովականի պիոներական ճամբարներում:

Սակայն սխալ կլիներ այդ օգնութիւնն նշանակութիւնը սահմանափակել լոկ նյութական օգնութիւնն շրջանակներով: Այն ուներ նաև բարոյաքաղաքական մեծ իմաստ: Լիբանանահայութիւնը և նրա հետ միասին ամբողջ սփյուռքահայութիւնը պարզորոշ տեսաւ, որ վտանգի և փորձութիւնների ժամին Մայր Հայրենիքի կառավարութիւնը և ժո-

դավուրդը իրենց հետ են և պատրաստ են նրանց
օգնության ձեռք մեկնել: Դրա շնորհիվ ամրա-
պնդվեց լիբանանահայության կորուզը՝ դիմագրա-
վելու ամեն տեսակ բռնությունների: Լիբանանա-
հայության անտեսական, մշակութային և հասար-
ակական կյանքը աստիճանաբար մտավ բնա-
կանոն հունի մեջ:



Սակայն այդ արյունալի ղեպքերից հետո դեռ
էր բոլորել մեկ տարին, երբ 1979-ի սեպտեմբե-
րին փաղանդավորները նոր զինված հարձակում
ձեռնարկեցին հայ համայնքի վրա: Այդ ժամանակ
դրությունը Մերձավոր արևելքում խիստ սրվեց
Քեմալ-Դեհդի համաձայնագրերի և Եգիպտոսի կա-
պիտուլյանտական քաղաքականության հետե-
վանքով: ԱՄՆ-ի, Իսրայելի և արաբական հետա-
դիմական և անկայուն ուժերի կողմից կանխա-
դժված քաղաքականության կենսազորժումը և
մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորումն ըստ
ամերիկա-իսրայելական ծրագրերի «լուծելը»
պահանջում էր արհեստականորեն սրել ներ-
քին դրությունը արաբական երկրներում, կոնֆ-
լիկտներ հրահրել և այլն: Այստեղ պետք է նկատի
ունենալ մի հանդամանք ևս. դա փաղանդավոր-
ների հեղեմոնիստական նկրտումներն էին՝ հաս-
տատելու իրենց տիրապետությունը սկզբնական
շրջանում առնվազն բոլոր քրիստոնյա համայնք-

ների վրա: Այսպիսի ստրատեգիայի շրջանակնե-
րում պետք է դիտել փաղանգավորների զինված
հարձակումների վերսկսումը Բեյրութի Բուրջ Հա-
մուդ և Նարաա հայկական թաղամասերի վրա:

1979-ի սեպտեմբերի 10-ի կեսօրին փաղանգա-
վորների զինված շոկատները ներխուժեցին արև-
ելյան Բեյրութի Բուրջ Համուդ և Նարաա թաղա-
մասերը: Հանգամանքների բերումով տողերիս հե-
ղինակը այդ օրերին գտնվում էր Բեյրութում, որը
մեզ հնարավորություն տվեց մոտիկից հետևելու
ղեկավարի զարգացմանը:

Փաղանգավորներին հաջողվեց պայթեցնել հա-
յերին պատկանող որոշ ձեռնարկություններ, գրա-
վել մի քանի ակումբներ, անամոթաբար առևանգել
անպաշտպան երեխաների, կանանց և ծերունի-
ների:

Զինված հարձակման հետ միասին փաղանգա-
վորները հայերին ներկայացրին վերջնադիր, պա-
հանջելով զենքը վայր դնել և հանձնել իրենց,
հրաժարվել դրական շեզոքության քաղաքականու-
թյունից, միանալ «Լիբանանյան ճակատին» և
դիրքորոշվել ընդդեմ Լիբանանի առաջադիմական
և դեմոկրատական ուժերի:

Լիբանանահայ համայնքի գոյության համար
ստեղծվեց ծանր վիճակ: Սակայն այս անգամ հա-
յերը ավելի լավ էին նախապատրաստված:

Սեպտեմբերի 10-ից սկսած նրանք մղում էին
ինքնապաշտպանական մարտեր, զենքը ձեռքին
պաշտպանում իրենց գոյության իրավունքը, տնե-

րը և ազգային արժանապատվութիւնը: Հայ մար-
 տիկները ցերեկները հետ էին մղում թշնամու հար-
 ձակումները, իսկ գիշերները զենքը ձեռքներին
 հսկում հայկական թաղերի ապահովութիւնը:
 Գտնովելով շահագանց ծանր պայմաններում և տա-
 նելով մեծ զրկանքներ, հայ մարտիկները ցույց էին
 տալիս քաջության և անվեհերության հիանալի օրի-
 նակներ, որի ընթացքում նրանք ոչ միայն պաշտ-
 պանովում էին, այլև հակահարված տալիս փաղան-
 դավոր ռազմամուկներին: Այս վերջին հանգամանքը
 որպէս շատ կարևոր իրադարձութիւն, լայն ար-
 ձագանք գտավ արարական շրջանակներում: Ե՛հպ-
 քերի հետևողների ուշադրութիւնը գրավեց, — նը-
 շում էր «ան-նիդա» թերթը» — զինված շոկատների
 (փաղանդավորների — Ն. Հ.) դեմ ցուցաբերված
 հայկական զորավոր հակազդեցութիւնը, որի ըն-
 թացքում պաշտպանության դիրքերի վրա գտնվող
 հայերը ոչ միայն կարողացան Բուրջ Համուդ-
 Նարասա շրջանի բոլոր սահմանները պաշտպանել,
 այլև առաջ շարժվեցին»³³: Թերթն իրավացիորեն
 այն միտքն էր արտահայտում, որ լիբանանյան
 աշերի անընդհատ հարձակումները հայերի վրա
 վերջիններիս ստիպեցին, որ նրանք թառավել ի-
 րենց ուժերին վստահեն, մանավանդ, որ կառա-
 վարութիւնը չի ցանկանում իր պարտավորու-
 թիւնների նվազագույնն անգամ կատարել»³⁴:

³³. «Ան-նիդա», 16. X. 1979:

³⁴ Նույն տեղում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս անգամ ավելի կազմակերպված և վճռականորեն գործեցին նաև Լիբանանի ազգային-հայրենասիրական, բոլոր դեմոկրատական և առաջադիմական ուժերը: Փաղանգավորների զինված հարձակումը արևելյան Քեյրուսի հայաբնակ թաղերի վրա յուրատեսակ փորձաքար հանդիսացավ Լիբանանի արաբ բընակչության, նրա հասարակական-քաղաքական տարբեր ուժերի համար: Եվ ի պատիվ նրանց պետք է ասել, որ այս ուժերը հենց սկզբից շատ ճիշտ կողմնորոշվեցին ու ճիշտ հասկացան հայերի դեմ սանձազերծված թշնամական գործողության վրտանգավոր իմաստը: Նրանց համար պարզ էր, որ այդ քայլը ուղղված էր ոչ միայն և ոչ այնքան հայերի, որքան ամբողջ Լիբանանի ազգային շահերի դեմ: Այդ ուժերը մեկ անգամ ևս հավաստեցին, որ հայ համայնքը ինքնուրույն գոյության իրավունք ունի, ինչպես Լիբանանի մյուս համայնքները, և հայերի կողմից կիրառվող դրական շեղոքության քաղաքականությունը ծառայում է Լիբանանի ազգային շահերին ու տերիտորիալ ամբողջականությունը: Սա շատ կարևոր եզրակացություն էր, որին հանգեցրին Լիբանանի քաղաքական ուժերի ճնշող մեծամասնությունը: Մեկնելով այդ ելակետից, նրանք բացեիրաց դատապարտեցին փաղանգավորների թշնամական գործողությունները և իրենց խրոխտ ձայնք բարձրացրին ի պաշտպանություն Լիբանանահայության, Լիբանանում տարածվեց ցասման հուժ-

կու ալիք: Եվ սեպտեմբերյան այդ տաղնապալի օրերին Լիրանանի ազգաբնակչության հայապաշտպան դիրքորոշումը թերևս ամենալուսավոր և հուսադրիչ պահերից մեկն էր: Մարտերի թեժ օրերին, սեպտեմբերի 12-ին հատուկ նիստ գումարեց Լիրանանի Ազգային շարժման քաղաքական կենտրոնական խորհուրդը, որը, ինչպես նշել ենք, իր շարքերում միավորում է կոմունիստական, առաջադիմական սոցիալիստական, սիրիական ազգային-սոցիալական կուսակցությունները և այլ առաջադիմական կազմակերպություններ: Քննարկելով հայ համայնքի համար ստեղծված ծանր վիճակը, ազգային շարժումը ընդունեց կոչ՝ ուղղված բոլոր լիրանանցիներին, որի մեջ խստորեն դատապարտվում էր Եփաղանգավոր կուսակցության տարրերի կողմից հայերի դեմ շղթայազերծված բնաշնչման արշավը: Եեշտելով, որ Եփաղանգավորներն ուղում են արմատախիլ անել հայ ժողովրդին, նրան հեռացնել իր բնակած վայրերից, զրկել ապրուստի միջոցներից և վերջնականապես վերացնել նրա ազգային ինքնուրույնությունը, ազգային շարժման ղեկավարությունը կոչ էր անում պաշտպան կանգնել հայերին և Եվրոպական դիրքորոշում պահանջել բոլոր նրանցից, որոնք շահագրգռված են կանխելու և ձախողելու լիրանանյան տերիտորիան տրոհելու և նրա ժողովուրդը մասնատելու ծրագրերը»³⁵:

³⁵ «Կառն», 15. IX. 1979:

Հատուկ հայտարարությամբ հանդես եկավ Լի-
 բանանի սուննիների բարձրագույն իսլամական
 խորհուրդը, որը կառավարությունից պահանջեց
 զինված ուժեր օգտագործել հայկական համայնքը
 պաշտպանելու համար³⁶, Լիբանանի աջերի գոր-
 ծողությունները խիստ քննադատեց սիրիական
 բաաս կուսակցության լիբանանյան մասնաճյուղի
 ղեկավարությունը: Նա փաղանգավորներին և շա-
 մունականներին դատապարտեց այն բանում, որ
 հայերի դեմ պրովոկացիաների դիմելով, նրանք
 ձգտում են պառակտում սերմանել լիբանանյան
 հասարակության մեջ³⁷: Ի պաշտպանություն լի-
 բանանահայության հանդես եկան շիա համայնքի
 հոգևոր առաջնորդը, «Ամալ» կազմակերպության
 ղեկավարությունը, ուղղափառ, ասորի համայնք-
 ները, բազմաթիվ քաղաքական գործիչներ, պառ-
 լամենտի անդամներ, մտավորականության ներ-
 կայացուցիչներ: Չափազանց մեծ արձագանք գը-
 տավ Լիբանանի երևելի դեմքերից մեկի՝ շեյխ Մու-
 համեդ Սուվեյդիի «Ճշմարտության խոսք՝ ի խըն-
 դիր հայերի» հոդվածը, որ տպվեց «աս-Սաֆիր»
 թերթում: Հեղինակը արտահայտում է մի շարք
 հետաքրքիր մտքեր, որոնք մեր կարծիքով խիստ
 ուշագրավ են: Նա նշում է, որ հայերը որպես զաղ-
 թականներ հայտնվելով Լիբանանում շուտով ոտ-
 քի կանգնեցին, հասան առաջավոր դիրքերի,
 լուրջ և արդյունավետ աշխատանքի հոյակապ

³⁶ «lke», Beirut, 21. IX. 1979.

³⁷ Նույն տեղում, 15. IX. 1979:

օրինակ հանդիսացան և քաղաքացիական ճիշտ
գիտակցութիւն ցուցաբերեցին: «Ապա պատահեց
վերջին պատերազմը, — գրում է շեյխ Սուվեյդին, —
և հայերը շուգեցին կողմ լինել նրանում, այլ մնա-
ցին շեղոք դիրքի վրա և իրենց բարվոք հարաբե-
րութիւնները պահեցին բոլոր կողմերի հետ, հա-
կառակ իրենց դեմ կատարվող ճնշման և ահաբեկ-
ման բոլոր փորձերի նրանք ցավեցին ի տես պա-
տահածին և տխրեցին այս տարօրինակ և արյունոտ
պատերազմի համար, որը տեղի էր ունենում երկու
կողմի քաղաքացիների միջև և որոնցից մեկը մշու-
սին մորթում էր ոչխարի նման: Հայերը այս պատա-
հածները նկատեցին մարդկային արժեքների ոտ-
նահարում, որը խորթ էր իրենց սուլթոութիւններին
և ավանդութիւններին, որոնք հիմնված են ճշմար-
տախոսութիւն, պարկեշտութիւն, անկեղծութիւն
և հավատարմութիւն սկզբունքների վրա»³⁸: Եւ-
րոնակելով իր վերլուծական գիտողութիւնները,
շեյխ Մուհամեդ Սուվեյդին շեշտում է, որ հայերի
այդ դիրքորոշումը դուր չեկավ պատերազմի և
դենք բարձրացնելու ջատագովներին, այսինքն՝ ա-
ջերին, որոնք սկսեցին ձաղկել հայերի շեղոք դիրք-
որոշումը և նրանց ղեկավարների մտքերի մեջ
վերստին սկսեց ուրվագծվել «տեղահանութիւն
ծրագիրը: Ինչու՞ իրենց մեջ պահել մարդիկ, որոնք
մարտնի հայրենիքին չեն հավատա և հօգուտ նրա
չեն գործում: Այսպես է, որ շղթայաղերծվեց պա-

³⁸ «Աս-Սաֆիր», 24. IX 1979.

տերազմը հայերի դեմ»³⁹։ Ինչպես տեսնում ենք, շատ դիպուկ կերպով է մերկացված փաղանգավորների հակահայկան դիրքորոշման էությունը։

Պատերազմի օրերին լիբանանյան հայրենասիրական-առաջադիմական ուժերը բազմիցս դիմեցին կառավարութանը, պահանջելով լիբանանյան բանակը օգտագործել հայերի դեմ հարձակումը դադարեցնելու համար։ Սակայն այդ պահանջը, ցավոք, մնաց անպատասխան, և հայերը արիարար շարունակում էին ինքնապաշտպանական կռիվները՝

Վերը նշված գործոնները, առաջին հերթին արևելյան Բեյրութի հայ բնակչության հերոսական դիմադրությունը հարկադրեցին փաղանգավորներին համաձայնվել կրակի դադարեցմանը, որը ուժի մեջ մտավ սեպտեմբերի 14-ին։

Կռիվների ընթացքում հայերից զոհվեց 25 և վիրավորվեց 30 մարդ, առևանգվածների թիվը հասնում էր 80-ի։ Փաղանգավորների կորուստները՝ թե՛ զոհվածները և թե՛ վիրավորները, ավելի շատ էին։ Կողմերը համաձայնության եկան դերիների փոխանակման վերաբերյալ։ Եվ ահա այստեղ բացահայտվեց հետևյալ պատկերը։ Փաղանգավորների կողմից վերցված գերիների մեջ շկար ոչ մի հայ մարտիկ։ Գերիներն ըստ էության առևժանգված անպաշտպան կանայք, ծերունիներ և երեխաներ էին։ Իսկ հայերի կողմից վերցված գե-

³⁹ Նույն տեղում։

րիները բացառապես փաղանգավորների զինյալ մարտիկներն էին: Նրանց շարքերում չկար ոչ մի կին, մանուկ կամ ծերունի, թեև հայերը նույնպես դրա հնարավարությունն ունեին: Բայց հայ մարտիկները ցուցաբերել էին վեհանձն ասպետություն և չէին դիմել նման քայլի: Եվ այս հանգամանքը նույնպես չվրիպեց լիբանանյան առաջադիմական հասարակայնության ուշադրությունից:

Այսպիսով, ամփոփելով, կարող ենք ասել, որ լիբանանյան աշերին շհաշողվեց իրագործել իրենց սահմանադրական ծրագրերը հայկական համայնքի նկատմամբ: Ձախողվեցին նրանց փորձերը՝ ստիպելու լիբանանահայ համայնքին հրաժարվելու դրական շեղորոթյան քաղաքականությունից և միանալ «Լիբանանյան ճակատին»: 1979-ի սեպտեմբերյան մարտերի օրերին լիբանանահայ համայնքի ղեկավարությունը ընդունեց «Կոչ լիբանանահայությանը», որտեղ մեկ անգամ ևս հրատակորեն ընդգծվեց, որ «ապարդյուն են հայության քաղաքացիական դիրքորոշումը ճնշումի տակ փոխելու բոլոր ճիգերը»⁴⁰: Աշերը չկարողացան հայերին ներգրավել եղբայրասպան պատերազմի մեջ և քաղաքացիական պատերազմին տալ ազգային երանգավորում:

Ձախողման ենթարկվեց լիբանանահայ համայնքի «հարցի լուծման» աշերի, և առաջին հերթին փաղանգավորների, մյուս տարրերակը՝ լիկվիդաց-

⁴⁰ «Կոնկ», 22. IX, 1979:

նել հայկական համայնքը, զրկել նրան ինքնուրույն համայնքի ստատուսից և իր ուրույն ազգային դիմագծից: Հանրահայտ է, որ փաղանգավորները ղեկավարվում են հեզեմոնիստական նրկըրտումներով: Նրանք ցանկանում են իրենց ենթարկել նախ և առաջ բոլոր քրիստոնյա մարտնիխմբերը և ուժերը: Այստեղից էլ նրանց բազմաթիվ բախումները 1978—1980 թվականների ընթացքում Սուլեյման Ֆրանժիեի մարտնիխմբի, «Լիբանանյան մայրիի պաշտպանության» կազմակերպության, որը կազմված է մարտնիներից, ռազմական ջոկատների և, վերջապես, իրենց գըլխավոր դաշնակցի՝ Ազգային-ազատական կուսակցության, այսինքն՝ շամունականների հետ: 1980-ին հանկարծակի հարձակումով փաղանգավորներին հաջողվեց ջախջախել շամունականների ռազմական հիմնական ուժերը և ստիպել նրանց ընդունել իրենց գերիշխանությունը:

Սակայն փաղանգավորների նպատակը միայն սրանով չի սահմանափակվում: Մարտնի բոլոր խմբավորումներն իրենց ենթարկելուց հետո կամ դրան զուգահեռաբար, նրանք հույսեր են փայփայում իրենց տիրապետությունը հաստատել նաև մյուս քրիստոնյա համայնքների և այնուհետև ամբողջ Լիբանանի վրա: Փաղանգավորների այս ստրատեգիական դիրքորոշման շրջանակներում պետք է լուծվեր նաև հայկական համայնքի հարցը՝ զինված հարձակման միջոցով հասնել հայկական համայնքի վերացմանը: Փաղանգավորնե-

րի կարծիքով հայկական համայնքի վերացումը և իրենց տիրապետութեան հաստատումը արևել-յան Բեյրութի հայկական թաղամասերի վրա կարևոր քայլ կհանդիսանար իրենց հեգեմոնիստական ծրագրերի իրականացման ճանապարհին, կընդարձակեր նրա տիրապետութեան տակ գըտնովոզ շրջանների աշխարհագրական սահմանները և կբարձրացներ նրանց քաղաքական ազդեցությունն ու կշիռը Լիբանանում: Իսկ դա իր հերթին կարող էր նպաստել, որ փաղանգավորներն ավելի համառորեն պարտադրեն Լիբանանի կոնֆլիկտի լուծման իրենց տարբերակը:

Լիբանանահայ համայնքը վերացնելու վերաբերյալ փաղանգավորների ծրագիրը լիովին հավանություն էր գտնում ԱՄՆ-ի, Իսրայելի և ՆԱՏՕ-ի որոշ անդամների կողմից: Հարցն այն է, որ Լիբանանահայ համայնքը հանդիսանում է սփյուռքահայութեան ամենաազդեցիկ կենտրոններից մեկը և ամուր կապերով կապված է Մայր Հայրենիքի հետ: Իսկ դա դուր չի գալիս վերոհիշյալ ուժերին: Այդ պատճառով էլ նրանք, առաջին հերթին ամերիկյան իմպերիալիստները, ձգտում են լիկվիդացնել Լիբանանի հայ համայնքը, սփյուռքահայութեան կենտրոնը տեղափոխել ԱՄՆ, դրանով ուժեղացնել իրենց ազդեցությունը ողջ սփյուռքահայութեան վրա և փորձել նրան օգտագործել իր հակասովետական քաղաքականութեան մեջ: Այդ պատճառով էլ Լիբանանահայ համայնքը վերացնելու փաղանգավորների փորձերի ձախողումը

պետք է համարել ծանր հարված նաև ԱՄՆ-ի, Իսրայելի և Նրանց դաշնակիցների ծրագրերին:

Ձինված գործողութունները հայկական համայնքի դեմ է՛լ ավելի ուժեղացրին լիբանանյան աշերի, մանավանդ փաղանգավորների բարոյաբաղաքական մեկուսացումը: Նրանց հարձակումները քրիստոնյա հայ համայնքի վրա ակներևորեն ցույց տվեցին աշերի և արևմտյան որոշ գաղափարախոսների կողմից լիբանանյան կոնֆլիկտը որպես մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրոնական պատերազմ ներկայացնելու «տեսակետների» ամբողջ կեղծիքը և մի ավելորդ անգամ եկան փաստելու այդ կոնֆլիկտի քաղաքական բնույթը:



Ծանր ժամանակներ է ապրում Լիբանանը: 1982-ի հոմիսի 6-ին, 1967-ի իսրայելական ազրեսիայից ուղիղ 15 տարի անց, իսրայելական 80-հազարանոց բանակը, զինված ժամանակակից զենքի բոլոր տեսակներով, կրկին ներխուժեց Լիբանան: Չնայած պաղեստինյան և Լիբանանի ազգային-հայրենասիրական ուժերի դիմադրությանը, ազրեսորին հաջողվեց գրավել Լիբանանի տերիտորիայի մեկ երրորդը և ընդհուպ մոտենալ Բեյրութին: Այսպիսով, լիբանանյան կոնֆլիկտը թևակոխեց նոր փուլ: Իսրայելական ազրեսիան, արևմըտյան Բեյրութի թաղամասերի բարբարոսական

ամբակոծումները նոր, ըսված տառապանքների
 պատճառեցին պաղեստինցիներին և լիբանանցի-
 ներին, այդ թվում նաև լիբանանահայերին: Այդ
 անմարդկային դործողությունների հետևանքով
 սպանվել և վիրավորվել են 60 հազար, անհետ
 կորել 10 հազար մարդ, իսկ 800 հազար մարդ,
 կամ լիբանանի ազգաբնակչության մոտ մեկ քա-
 ուորդը մնացել է անօթևան: Իսրայելը փաստորեն
 դեկոնցիդի քաղաքականություն է վարում պաղես-
 տինցիների նկատմամբ: Այս բոլորի համար Իս-
 րայելի կառավարողների հետ համահավասար
 պատասխանատվություն է կրում ԱՄՆ-կառավա-
 րությունը, որը ամերիկա-իսրայելական այսպես
 կոչված «ստրատեգիական համագործակցության»
 շրջանակներում քաղաքական և ռազմական ան-
 սահմանափակ աջակցություն է ցույց տալիս իս-
 րայելական ազրեսորին: Սանձազերծելով նոր ազ-
 րեսիա, Իսրայելը և նրա թիկունքում կանգնած
 ԱՄՆ-ը ձգտում են ջախջախել և վերացնել պա-
 ղեստինյան դիմադրության շարժումը և լիբանանի
 ազգային-հայրենասիրական ուժերը, հարկադրել
 Միրիային իր զորքերը դուրս բերել լիբանանից,
 հաստատել լիբանանում պրոարևմտյան մարիո-
 նետային ուժիմ և լիբանանում տեղադրել մի-
 ջազգային, ՄԱԿ-ի հետ որևէ առնչություն չունե-
 ցող ուժեր, որի միջուկը, ինչպես նախատեսվում
 է, պետք է կազմեն ԱՄՆ-ի ռազմական ուժերը:

Իսրայելական նոր ազրեսիան Մերձավոր արևել-
 քը վերածեց է՛լ ավելի վտանգավոր օջախի:

Իսրայելական վայրագությունները, իբրանանի խաղաղ բնակչության և պաղեստինցիների զանգվածային սպանությունը խոր զայրույթ առաջացրեց ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկության մոտ Իսրայելի նկատմամբ, որն առաջին անգամ չէ, որ մարտահրավեր է նետում միջազգային հասարակայնությանը, անտեսում ՄԱԿ-ի և նրա Անվտանգության Խորհրդի բազմաթիվ որոշումները մերձավորարևելյան ճգնաժամի վերաբերյալ:

Իսրայելի նոր, ոչնչով չհրահրված ագրեսիան մեծ վրդովմունք առաջացրեց Սովետական Միության բոլոր մարդկանց մոտ: 1982-ի հունիսի 15-ին հրասպարակվեց սովետական կառավարության հայտարարությունը, որտեղ խստորեն դատապարտվում են Իսրայելի և նրա հովանավորների գործողությունները: Սովետական կառավարությունը լուրջ նախազգուշացրեց Իսրայելին, պահանջելով դադարեցնել ագրեսիան և իր գորքերը ամբողջությամբ դուրս բերել իբրանանից: «Սովետական Միությունը,— ասված է այդ հայտարարության մեջ— ոչ թե խոսքով, այլ գործով հանդես է գալիս արարների կողմում, հասնում այն բանին, որ ագրեսորը հեռանա իբրանանից: Նրանք, ովքեր այժմ տնօրինում են Իսրայելի քաղաքականությունը, չպետք է մոռանան, որ Մերձավոր արևելքը Սովետական Միության հարավային սահմանների անմիջական մոտակայքում գտնվող շրջան է, և այնտեղ կատարվող իրադարձությունները չեն կարող

չորշափել ՍՍՀՄ-ի շահերը: Մենք Իսրայելին նախազգուշացնում ենք այդ մասին»⁴¹,

Սակայն իսրայելական ազրեսորները և նրանց թիկունքում կանգնած ամերիկյան իմպերիալիստները ոչ միայն շարունակում են իրենց բարբարոսական գործողությունները Լիբանանում, այլև լուրջ հոգ են նախապատրաստում Լիբանան ԱՄՆ-ի ռազմական ուժերը մտցնելու համար: Այդ կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևը դիմեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռ. Ռեյգանին, կոչ անելով Միացյալ Նահանգներից կախված ամեն ինչ անել դադարեցնելու արյունահեղությունը Լիբանանում: Անդրադառնալով այն հարցին, որ ԱՄՆ-ը սկզբունքորեն պատրաստ է ամերիկյան զորքերի կոնտրոլին ուղարկել Լիբանան, Լ. Ի. Բրեժնևը ԱՄՆ-ի պրեզիդենտին զգուշացրեց, «որ եթե դա իրոք տեղի ունենա, ապա Սովետական Միությունը իր քաղաքականությունը կկառուցի՝ հաշվի առնելով այդ գիաստը»⁴²:

Ազրեսիայի և զենոցիդի քաղաքականությունը այն ուղին չէ, որ կարող է հասցնել մերձավորարևելյան կոնֆլիկտի և նրա բաղկացուցիչ մասը կազմող լիբանանյան ճգնաժամի լուծմանը: Այդ հարցի կարգավորման ճիշտ ուղին նշեց ՍՄԿԿ XXVI համագումարը: «Ժամանակն է,— ընդգծեց

⁴¹ «Սովետական Հայաստան», 16. VI 1982:

⁴² Նույն տեղում, 9.7.1982:

լ. Ի. Բրեժնեը ՍՄԿԿ XXVI համագումարին ՍՄԿԿ
Կենտկոմի տված Հաշվետու զեկուցման մեջ,—
վերադառնալ արդարացի և ռեալիստական հիմքի
վրա համապարփակ կարգավորման ազնիվ կո-
լեկտիվ որոնումներէ»⁴³։ Միայն այդ ուղիով է
հնարավոր բարենպաստ քաղաքական մթնոլորտ
ստեղծել Մերձավոր արևելքի և Լիբանանի ճշգ-
նաժամի լուծման համար, որը վերջապես խաղա-
ղություն կրերի բազմաշարշար Լիբանանին և նրա
տառապյալ ժողովրդին։

⁴³ Լ. Ի. Բրեժնե, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի Հաշվետու
զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակ-
ցության XXVI համագումարին և կուսակցության հերթական
խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնա-
զավառում, Երևան, 1981, էջ 22։

Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի
ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
1975—1982 թթ.

Оганесян Николай Оганесович
ЛИВАНСКИЙ КРИЗИС И ПОЗИЦИЯ
АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ЛИВАНА
(1975—1982 гг.)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1982

Խմբագիր՝ Վ. Մ. Սահակյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդայան .
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Ռ. Կնյազյան

ИБ 3953

Հանձնված է շարվածքի 29. 07. 1982 թ.:

Ստորագրված է տպագրության 1. 09. 1982 թ.:

Տորմատ՝ 70×90¹/₃₂: Բուլթ տպ. № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր 2,92 պայմ. տպագր. մամ., հրատ. 2,34 մամ.:

Պատվեր՝ 2055, ՎՖ 06885: Տպաքանակ՝ 10 000: Գինը՝ 5 կուպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан». Ереван-9, ул. Теряна 91.

ՀՄՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի տոհմերի գործերի պետ. կոմիտեի № 1 տպարան:

Երևան, Ալավերդյան փող. № 65.

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательства, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.